

2464

ՀՊԸ. ԲՓ. Ա. ԹՈՒԴՈՒՂԵԵՆԵ



# ԵԱՐԼԵԱԿԱ



82  
4-50



4-50

2 NOV 2009

№ 3 (15) ՀՊԸ. ԲՓ. Ա. ԹԱԴԻԹՈՒԹԵԱՆԻ ՆՈ 3 (15)



# ≡ ՆԱՌԻԼԵԱԿԱ ≡

Տարւինի եւ Կետի փոխադառձ սկրի ու յարգանքը: Յառաջադիմական Տարւինի յաղբութիւնը բներարիւնների ժամանակ: Ճարտարապետի կինը, Երկարուզու գիծը եւ հասնաւոր մանեստը: Դեպի Հնդկաստան: Առաջան ու իր ժառանքը: Պարատական խլրումները: Անկու որօնումն ու նոր ճիւղանքնոցը: Թոյնը, պաշոյնը եւ նաուլեական: Հեռուական գարձը հայրենիք:

ՀՅ 05. 2013



## ՆԱՌԻԼԵԱԿԱ

(ՀԱՅ Բ. ԿԻՊԼԻՆԳԻ)

|

Նիկոլայ Տարւինը, Հիւսիսային Ամերիկայի  
Տոպազ քաղաքից ոչ-հեռու նստած մի թումբի  
վրայ՝ նայում էր, թէ ինչպէս իր առաջ թա-  
ւալւում էին գետի կոհակները:

Նրա կողքին նստած էր սերակ ու դիւթիչ  
աչքերով մի աղջիկ. ըստ երևոյթին նա ծանօթ  
էր կեանքին ու նրա տիսուր կողմերին:

Կետ Շերիֆը՝ այդպէս էր աղջկայ անու-  
նը՝ իր ամբողջ կեանքը անց էր կացրել Արե-  
մտեան Ամերիկայի անապատներում։ Նրա ճար-  
տարապետ հայրը շարունակ մի տեղից միւսն  
էր թափառում՝ երկաթուղիներ անցկացնելով  
դէպի այն քաղաքները, որոնք կարիք ունեին  
դրանց։ Եւ հենց որ ճանապարհն արդէն շի-  
նուած պըծած էր լինում ու առաջուայ խղճուկ  
աւանը, որ իրենց նոր եկած ժամանակը բաղ-  
կացած էր միայն փայտեայ աղքատիկ տներից՝  
երկաթուղու շնորհիւ սկսում էր աշխոյժ առու-  
տուր ու հարստանում։ Երբ նախկին խարխուլ



3360-2007

հիւղերի տեղը բռնում էին հսկայական տները. երբ երեան էին գալիս ճոխ վաճառատներ, թատրոններ, սկսում էին հրատարակուել լրագրեր ու լուսաւորուել ելեկտրականութեամբ՝ այն ժամանակ նրա հօրը տեղափոխում էին մի ուրիշ տեղ, որտեղ շատ անդամ իրենց տնից բացի ուրիշ բնակարան չէր լինում ու նրա ստորագրեալներից բացի՝ ուրիշ մարդիկ:

Երբ որ կետը մեծացաւ, նրան ուղարկեցին մեծ քաղաքի գպրոցը։ Այնտեղ նրա մէջ մի միտք ծագեց, որի վրայ երկար մտածեց ու վերջը վճռեց անպատճառ զլուխ բերել։

Մի անգամ մի հնդկացի կին նրանց գպրոցում Հնդկաստանի ու այնտեղի իր հայրենակցունիների թշուառ վիճակի մասին գասախօսութիւն կարդաց։ Այդ կինը նրանց տաջանքների մասին սրատաճմիկ բաներ պատմեց։ Պատմեց, թէ արագիսի աղքատութեան մէջ են ապրում նրանք Հնդկաստանի աւագուտ անապատներում. թէ ինչպէս առաւոտից մինչև երեկոյ աշխատում են այնպիսի անբերրի դաշտերում, ուր ոչինչ չի բունում. թէ ինչպէս հիւանդանում են նրանք ու իրենց որդիները ենթակայ են սովի. թէ ինչպէս հիւանդ միջոցին նրանք մնում են անօգնական, որովհետեւ ոչ հիւանդանոցներ կան այնտեղ և ոչ բժիշկներ։ Խոլերան, ծաղիկը, հարինքը աւերածներ են գործում այնտեղ, իսկ շատ անդամ էլ նրանց հիւրն է լինում ժանտախտը։

Երբ գասախօսութիւնը վերջացաւ՝ կետը

յուզուած ու արտասուքը աչքերին դուրս եկաւ դահլիճից. Նա այնպիսի տեսք ունէր, որ ասես թէ վրան մի աներեսյթ զօրութիւն էր իջել. Երջանկութիւնից կետը ուզում էր լաց լինել. Նա զգում էր, որ իր ամբողջ կեանքը փոխուելու է այդ օրուանից, և հաստատ վճռեց ծառայել այն բոլոր դժբաղներին, որոնց մասին լսեց մի քանի բոպէ առաջ, նրանց նուիրել իր ամբողջ ոյժերը, իր միտքն ու սիրտը։

Նա մտաւ Փել'դշերական կուրսերը, երկու տարում վերջացրեց ու վերադարձաւ Տոպազ՝ իր հօր մօտ, որը բաւական հարստութիւն ձեռք բերելուց յետոյ թողել էր իր ծառայութիւնը և բնակութիւն հաստատել այդ քաղաքում։ Նա Տոպազ եկաւ իբրև հմուտ Փել'դշերունի և միանգամայն պատրաստ Հնդկաստան գնալու՝ այնտեղ աշխատելու համար։

Եւ ահա, հենց այդ միջոցին նստած էր նա Նիկոլայ Տարւինի մօտ՝ թմբի վրայ և զրուցում էր նրա հետ, և Տարւինն իր սէրն էր յայտնում նրան ու խոզրում, որ համաձայնի իր կինը դառնալու։

Աղջիկը զգում էր, որ Տարւինն էլ իրեն է գուր գալիս, բայց չէր կարող նրա առաջարկն ընդունել, որովհետեւ զիտէր, որ այն ժամանակ այլ ևս չէր կարող իրագործել այն մտադրութիւնները, որոնցով ամբողջապէս տարուել էր ինքը։

Նա զգում էր, որ ինքն այլիս իրեն չէր պատկանում։ Նրան թւում էր, թէ այն բոլոր դժբաղդ

հնդիկ կանայք կանչում են իրեն և սպասում  
իր օգնութեանը:

Այս բոլորը նա մի առ մի պատմեց Նիկոլայ  
Տարւինին, սակայն վերջինս այս մասին լսել ան-  
գամ չէր ուզում: Նա օրիորդի միայնակ Հընդ-  
կառաւան գնալը չէր էլ կարողանում երկակայել:

Մի՞ գնաք, կետ, ասում էր նա, յիշեցէք,  
որ մենք հայր ու մայր ունենք: Դուք հօ չէք ասի,  
որ նրանց թողնելը լաւ բան է. բացի դրանից՝  
կայ մէկը, որը հիմա նստած է ձեզ մօտ ու  
սիրում է ձեզ աշխարհում ամեն բանից աւելի:  
Չէ՞ որ դուք էլ մի քիչ սիրում էիք նրան: Մի-  
թէ այդ ձեզ համար ոչինչ է:

— Օ՛, այդպէս մի ասէք, Նիկ: Ես զգում եմ,  
որ այս իմ կոչումն է և ես նրան շընետել չեմ  
կարող, չը գնալ չեմ կարող:

Եւ երբոր կետը պատմեց նրան, թէ ինչ-  
պէս հասնում են նրա սրտին դժբաղդ հնդիկ  
կանանց հառաշանքները. թէ ինչպէս գիշեր-  
ցերեկ հանգիստ չեն տալիս իրեն նրանց քաշած  
տաշանքներն ու սարսափները՝ այն ժամանակ  
Տարւինը ըրկարողացաւ յարգանք ըրտածել դէպի  
այն ամենը, որ ստիպում էր կետին բաժանուել  
իրենից: Նա խնդրում էր կետին, որ չըգնայ,  
բայց միենոյն ժամանակ ինքը համակրում էր  
նրա տեսնչանքները—ուրիշի տանջանքները թե-  
թեացնելու ձգումը: Այդ պատճառով էլ նրա հա-  
մար աւելի դժուար էր կետին համոզելը:

— Կետ, թանկագինս, յուսահատօրէն ասում

էր նա, մի՞թէ դուք կը գնաք այն կռապաշտ եր-  
կիրը: Հապա ձեր տռւնն ինչ կը լինի. հապա  
ձեր մայրը ի՞նչ կանի: Դուք այդ անել չէք կա-  
րող, կետ. հնդիկ կանայք կարող են համբերել:

Մենք յետոյ կարող էինք միասին գնալ,  
երբ կը պասկուենք և ես կարողութեան տէր կը  
դառնամ: Իսկ հիմա դուք ի՞նչպէս պէտք է օգ-  
նէք նրանց, երբ, մինչի անգամ, փող էլ չունէք:

— Միթէ մենակ փողով կարելի է օգնել նր-  
անց, բացականչեց նա. չէ, Նիկ, փողի մէջ ըրկայ  
ոչ բարութիւն, ոչ զթասրտութիւն և ոչ էլ  
ցաւակցութիւն: Իսկական օգնութիւնը ինքնա-  
զոհութեան մէջն է:

Տարւինը հասկացաւ, որ ինքը չի կարող  
համոզել նրան՝ յետ կենալ իր մտադրութիւնից.  
Նա հասկացաւ, որ կետը կը հեռանայ աշխարհի  
միւս ծայրը ու անյայտութեան մէջ կը կորչի:  
Եւ յուսահատութիւնը տիրեց նրան:

— Չէ, դուք չըպէտք է կործանէք ձեր կետն-  
քը, բացականչեց Տարւինը. Ես չեմ թողնի այդ:  
Ձեր մայրը իրան կը սպանի, լաց կը լինի, և ես  
էլ բոլոր ժամանակ նրա կողմը կը լինեմ: Դուք  
ձեր ոյժը չէք ճանաչում: Դուք չըգիտէք, թէ  
այն ինչ երկիր է: Այդ երկիրը միայն օձերի  
համար է. այնտեղ ջահէլ աղջկայ տեղ չի: Նրա  
կլիման վատ է. խոլերա, շոք ու մշտական պա-  
տերազմները անպակաս են այնտեղ, այնպէս որ  
ապրելն անհնարին է: Դուք պէտք է տանը մնաք:

— Այս, Նիկ, ես գիտեմ, որ սարսափելի երկիր

է այն և հենց դրա համար էլ ես գնում եմ այնտեղ: Եթէ մարդիկ այնաեղ լաւ ապրելիս լինէին՝ էլ իմ գնալը հարկաւոր չէր: Ես գնում եմ նրա համար, որ գոնէ մի քիչ թեթևացնեմ սրանց տանջանքները — այն գժբաղզների, քաղցածների ու զրկուածների տանջանքները: Ես շատ շնորհակալ եմ, որ դուք այդպէս հոգում էք իմ մասին, բայց և այնպէս ես երկու շաբաթից յետու կը ճանապարհուեմ Հնդկաստան:

Տարւինը գիտէր, որ նա հաստատ վճռել է գնալ, և որ իր բոլոր աշխատանքը զուր է:

Այդ միջոցին ժամը տասը խփեց և կետը վեր կացաւ, որ տուն գնայ: Տարւինը նրան ճանապարհ գցեց ու տիսուր վերադարձաւ տուն:

Նա կետի հետ ունեցած խօսակցութեան վրայ էր մտածում, թէ ՞նց անի, ՞նց պաշտպանի կետին՝ Հնդկաստանում նրան սպառնացող վտանգներից:

Ամենալաւ պաշտպանութիւնը կետին այն կը լինի, որ ինքն էլ նրա հետ գնար. բայց նա այս անել չի կարող, որովհետեւ անկարող է թողնել իր բոլոր գործերը: Ինչքան էլ որ ուժեղ լինէր նրա սէրը գէպի կետը, այնուամենայնիւ նա երբէք չէր մոռանում, որ ինքը ամենից առաջ իրեկ քաղաքացի պարտականութիւն ունի կատարելու իր երկրի ու հայրենի Տոպազ քաղաքի համար, որին անշափ սիրում էր:

Նա ներկայ էր եղել Տոպազի հիմնադրու-

թեան. նա ճանաչում էր այդ քաղաքը դեռ այն ժամանակից, երբ այնտեղ գեռ մի քանի տուն էր միայն. նա հրձւում էր Տոպազի բարգաւաճելը տեսնելով. նրա յաջողութեան մասին աւելի էր մտածում, քան թէ իր. նրա սէրը գէպի Տոպազը մի տեսակ կրօնական դաւանանք էր դարձել իր համար: Տարւինը չէր կարող թողնել իր հայրենի քաղաքն ու հեռանալ հիմա, երբ շուտով պառլամենտական ընտրութիւններ պէտք է լինէին և որ ինքը յոյս ունէր պառլամենտի անդամ ընտրուելու, ուր, մտածում էր, իրենց քաղաքի շահերի ջերմ պաշտպանը լինելու:

Նա զգում էր, որ չի կարելի միաժամանակ զբաղուել քաղաքականութեամբ և մտածել սիրոյ մասին:

Կետի հայրը, Շերիֆը, պատկանում էր հակառակ կուսակցութեան: Ընտրութիւնների համար պատրաստութիւն տեսնելով նա շրջում էր ամբողջ շրջանում, և երբ վերադառնալով Տոպազ՝ տեսաւ, որ իր հակառակորդը տարուել է կետով ու բարձի թողի արել իր կուսակցութեան գործերը, շատ ուրախացաւ:

Տարւինը ինքն էլ զգաց այդ և որոշեց սթափուել և գործի կենալ, մանաւանդ որ հետեւալ օրը միտինգ էր նշանակուած հարկան քաղաքում:

II

Տարւինը միտինդ եկաւ բուռն ցանկութեամբ բոնուած, ցոյց տալու, որ հակառակորդների դէմ տանելիք իր յաղթութեանը ոչինչ արգելել չի կարող:

Շերիֆին առաջինը խօսելու իրաւունք տուին: Տարւինը նստած էր յետեր և ոտը ոտի վրայով զցած անհանգստորէն ճօնում էր:

Շերիֆը պատկանում էր Տարւինի համար ատելի մարդկանց կարգին, որոնք յանկարծ հարստանալով, ամեն կերպ աշխատում են ոչ ոքի քէփի չը դիպչել: Բոլորին դուր գալու ցանկութիւնը նրա քաղաքական համոզմունքի հիմքն էր կազմում:

Իր համաքաղաքացիների համակըանքը գրաւելու համար նա յաճախում էր բոլոր՝ այսպէս կոչուած՝ աշխարհիկ բարեգործական ներկայացումները, վաճառքներն ու ընթրիքները, որ սարքում էին Ցոպազում. կնոջն ու աղջկանն էլ ստիպում էր իր հետ գնալ այդ բոլոր տեղերը և գրանով հիացնում էր բոլոր բարեգործներին, թէև արհամարհում էր աղքատներին և ուշադրութիւն չէր դարձնում ուրիշների դժբաղդութիւններին:

Տարւինը միշտ բաց ու համարձակ ցոյց էր տալիս իր հակակըանքը դէպի հակառակորդի այդ-

պիսի արարքները: Եւ հիմա էլ լսում էր, թէ ինչպէս Շերիֆը իր առաջ հաւաքուած ամբոխին ամեն տեսակ սիսակէաներ էր առաջադրում, և հազիւ էր զապում իր զարմանքը, թէ ինչպէս նա կարող էր ենթադրել անգամ, որ այդ կրթուած հաստրակութիւնը կը համաձայնուէր իր առողջ գատողութեանը հակասող քաղաքական ու անտեսական հայեացքների հետ, որոնց նա ուզում էր կիրառել պետութեան կառավարութեան համար:

Երբ որ Շերիֆը վերջացրեց, Տարւինը տեղից բարձրացաւ նրան պատասխանելու. Նա մի արագ ու թափանցող հայեացք ձգեց ամբոխի վրայ. Նրա աշքերից կարելի էր նկատել, որ այդ մարդը ընդունակ է իր ամեն ուզածին հանելու—ինչպիսի դժուար հանգամանքներում էլ ուզում է լինի—և կարող է հրամայել մարդկանց:

Նա օժտուած էր հոետորական շնորհքով, որ կարողանում է նուաճել իր ունկնդիրների սրտերը: Նա յաղթելու հաստատ համոզմունքով եկել էր ու հիմա խօսում էր տաք, կրակոտ. մեղադրում էր, նախատում, պահանջում և թողնում լսողների զատողութեանն ու արդարութեան զգացմունքին. և այս բոլորի մէջ նա շատ անկեղծ էր:

Ամբոխի միջից հաւանութեան շշուկները նրան աւելի էին զրգուում. նա բոնուեց ոգեսրութեամբ և զգաց, որ ամբողջովին տիրում է

ամբոխին։ Սա տմենալաւ բռպէներն էին, Նա ջարգեց իր հակառակորդին բոլոր կէտերում, տրորեց, ոչնչացրեց նրան։

Երբ Տարւինը վերջացրեց, բոլորը տեղներից վեր թռան և իրենց հաւանութիւնը յայտնեցին բարձր, ոգեստուած, շէնքը թնդացնող աղաղակներով։

Ամբոխը հնում՝ էր հրճուանքից, գլխարկները թռչում էին վեր, հասարակութիւնը հրիրում էր իրար՝ ցանկանալով Տարւինին իրենց ձեռքերի վրայ դուրս բերելու։ Նա հազիւ շունչ քաշելով դուրս եկաւ ամբոխի մէջից ու հասաւ առանձնասենեակ, դուռը կողպեց և թուլացած ընկաւ բազկաթոսի վրայ։

Հետեւալ առաւօտը բոլորն էլ ասում էին, որ Տարւինը յաղթեց իր հակառակորդին և որ, երբ Տարւինի ձառից յետոյ Շերիֆը վեր կացաւ նորից խօսելու՝ այն ժամանակ ամբոխը իր աղաղակով ստիպեց նրան լոել։

Բայց կայարանում, որտեղից նրանք Տոպաղ պիտի վերադառնային, Շերիֆը շատ սիրալիր էր դէպի Տարւինը և նրա հետ միասին գնալու գըժկամակութիւն չունենալով՝ նրանք միասին մտան վագոն։

Տարւինը չէր ուզում խօսել ու լուռ ծխում էր իր դանակը։ Կոնդուկտորը, որին Տարւինը ժանօթ էր, մօտեցաւ նրան ու նրանք խօսեցին իրար հետ։

Կոնդուկտորը յայտնեց, որ նոյն գնացքով,

առաջին կարգի վագոնով գնում է «Երեք ընկերակցութիւն» ընկերութեան նախագահը իր կնոջ հետ։ Նախագահը ինդըել էր իրեն, որ նա ցոյց տայ տոպազի գիտակից ու բանիմաց մարդկանց, որոնց հետ նա կարողանայ խօսել Տոպազի մասին։

Տարւինը խնդրեց կոնդուկտորին՝ ժանօթացնել իրեն նախագահի հետ։ Կոնդուկտորը հեռացաւ ու իսկոյն դառնալով ասաց, թէ նախագահը շատ ուրախացաւ, երբ իմացաւ, որ այս գնացքով երկու տոպազիներ են գնում, և խընդուեց հազորգել, որ շատ ուրախ կը լինի, եթէ նրանք բարի լինին և գան իր վագոնը։

Տարւինի սիրալ սկսեց ուրախութիւնից բարախիլ։ Նա զգաց, որ բաղդը ժպտում է իրան։

Բանն այն էր, որ երկաթուղային «Երեք ընկերակցութիւն» ընկերութիւնը ամբողջ տարուց ի վեր մտածում ու բանակցութիւն էր վարում։ Մայրաքաղաքից մինչե ծովը Տոպազի միջով երկաթողային զիծ անցկացնելու, բայց թէ այդ բոլորը շատ զանդաղ էր կատարուում և ընկերութիւնը տատանուում էր շարունակ, թէ ճանապարհն արգեօք Տոպազով լաւ կը լինէր, թէ Ռուսակը քաղաքով, որը Տոպազից 100 վերստ հեռաւորութեան վրայ էր գտնւում։

Խուսալերն ու Տոպազը մրցակիցներ էին։ Երկու քաղաքն էլ հիմնուել էին միաժամանակ։ Սկզբում Տոպազն էր աւելի ծաղկեալ դրութեան

մէջ, բայց յետոյ սկսեց բարձրանալ Ռուսալեռը:  
Եւ եթէ հիմա երկաթուղու դիմն անցնի  
այնտեղով՝ ուրեմն Տոպազը կորած է: Իսկ եթէ  
դիմն անցկացնեն Տոպազով՝ ուրեմն քաղաքի  
ապագան ապահովուած է: Նա հնարաւորութիւն  
կունենայ իր սթերքները հասցնել ծովափ, աշ-  
խոյժ առևտուր սկսել ուրիշ քաղաքների հետ  
և կըսկի արագ զարգանալ ու ծաղկիլ: Միայն  
հարկաւոր է, որ «Երեք ընկերակցութիւնը» եր-  
կաթուղու դիմը անցկացնի Տոպազով:

Տարւինը, որ իր հայրենի քաղաքը սիրում  
էր աշխարհաւմ ամեն բանից առաւել՝ գիտէր,  
որ քաղաքի համար երկաթուղին անհրաժեշտ է,  
ինչպէս օգն ու արևի լոյսը: Շոգեկառքի սուլոցի  
հետ մուտք կ'գործի այդտեղ քաղաքակրթութիւնը,  
կեանքն ու լուսաւորութիւնը: Քաղաքը անհա-  
մեմատ կը բարձրանայ հարեան բոլոր քաղաք-  
ներից, կը յաղթէ նրանց մրցութեան մէջ ու  
այս հարուստ երկրի կեդրոնը կը գառնայ:

Այս բոլորը Տարւինի ամբողջ կեանքի տես-  
չանքներն էին: Եւ հիմա ամեն բան այդպէս  
լաւ էր դասաւորւում: Նա կը ծանօթանայ «Երեք  
ընկերակցութիւն» ընկերութեան նախագահի  
հետ և կը համոզի նրան, որ երկաթուղու դիմը  
անցկացնեն Տոպազով:

Կոնդուկտորը Տարւինին ու Շերիֆին տա-  
րաւ նախագահի կուպէն, ներկայացրեց նրան,  
իսկ նախագահը ծանօթացրեց նրանց իր կնոջ  
հետ, որը 25 ամեայ մի գեղեցիկ կին էր:

Նախագահի կուպէն կահաւորուած էր գե-  
ղեցիկ ու շքեղ:

Նախագահ պ. Մետրը աթոռ առաջարկեց  
Շերիֆին, որ նստի, ինքն էլ նստեց նրա դի-  
մաց և սկսեց լսել Տոպազի մասին նրա աշ-  
խոյժ բացատրութիւնները, որ տալիս էր Շերիֆը:  
Իսկ Տարւինը խօսակցում էր տիկին Մետրի հետ:

Տարւինի սուր ու թափանցող միտքը ըմ-  
բռնեց, որ տիկին Մետրը պէտք է որ մեծ ազ-  
գեցութիւն ունենալիս լինի ամուսնու վրայ:

3360 - ԶԵՐ

Նա հասկացաւ, որ նախագահի միջոցով որեւէ  
նպատակի համակարգութեան ամառ պէտք է նախ ազգել  
նրա կնոջ վրայ: Բայց թէ ինչպէս: Արա համար  
ամենից առաջ հարկաւոր էր նրա արամագրու-  
թիւնն իր կողմը գարձնել ու յետոյ գտնել նրա  
թոյլ կողմը:

Տարւինը Տոպազի մասին երկար չը խօսեց:  
Նա ասաց միայն, որ դա Արևմտեան Ամերիկա-  
յի ամենագեղեցիկ քաղաքներից մէկն է, և որ  
լաւ կանի նա, եթէ երկու օրով կանգ առնի  
այդտեղ անձամբ քաղաքին ծանօթանալու: Յե-  
տոյ նա սկսեց խօսել տիկին Մետրի մասին:

Տարւինը շատ գրաւիչ կողմեր ունէր: Նրա  
ուրախ բնաւորութիւնը վարակում էր խօսակից-  
ներին: Նրա սրտաբացութիւնն ու դէպի ուրիշ  
ները հաւատով վերաբերուելը չափից դուրս-  
դուրեկան էին գարձնում նրան: Ծնորհիւ այս  
բոլորի, շուտով նա ու տիկին Մետրը շատ  
մտերմացան իրար:



Տիկինը պատմեց նրան, որ ինքը միշտ մեծ քաղաքներում է ապրել ու հիմա վախենում է, որ իր համար տիսուր լինի Դենաւիրը—այն փոքրիկ քաղաքը, ուր տանում էր հիմա իր ամուսինը:

—Չէ, չէ, այսպիսի կեանքը միանգամայն խորթ ու անտանելի է ինձ համար, ասաց տիկինը. Ես սովորած եմ մեծ քաղաքի աղմուկին ու շուքին: Ես սիրում եմ նրա աղմուկին ու ժխորը, նրա վիթխարի տներն ու հոյակապ փողոցները, նրա թատրոններն ու պալատները: Ես ինչպէս պէտք է ապրեմ այն քաղաքի փոքրիկ տներից մէկում, ուր գնում ենք հիմա: Ես ի՞նչ պէտք է անեմ այն տիրապէմ մարդկանց մէջ, որոնք մշտապէս զբաղուած են, մշտապէս աշխատանքի: Ես, որ սովոր եմ մեծ հասարակութեան ուրախութեանն ու փայլին:

—Ի՞նչո՞ւ եք դուք այնտեղ գնում, հարցրեց Տարւինը:

—Ա'լս, ես համաձայնուեցի բնակուել այնտեղ միմիայն նրա համար, որ ամուսինս այնտեղ շատ ձեռնտու ձեռնարկութիւն է սկսում, որի շնորհիւ մենք աւելի կը հարստանանք: Սրա համար մենք այնտեղ պէտք է մնանք երկու տարի: Օ՛, աւելի մնալու ես համբերութիւն չէի ունենալ: Բայց թէ, այն ժամանակ մենք շատ հարուստ կը լինինք ու ընդմիշտ կը հաստատուենք մեծ քաղաքում. օհ, որքան բաղդաւոր կը լինեմ ես այն ժամանակ:

Տարւինը հասկացաւ, որ այս կինը ամենից շատ սիրում ու գնահատում է փարթամութիւնը, որ հենց դրա համար էլ ամուսնացել է «Երեք ընկերակցութիւն» ընկերութեան այդ ծեր նագահի հետ և դրա համար էլ պատրաստ է ամեն զոհողութեան:

Տարւինը տիկին Մետրի ձեռքերին նայելով՝ նկատեց, որ նրա մատները զարդարուած են հազուագիւտ թանկագին մատանիներով, որոնց մեծ սիրով շարունակ նայում էր տիկինը իրենց զրոյցի ժամանակ:

Տարւինը նրա ձախ ձեռքի մատանու խոզոր գոհարին նայելուց չէր կշտանում: Տիկինը հանեց մատից, որ ցոյց տայ նրա քարը:

—Շատ լաւն է, այնպէս չէ, հարցրեց տիկինը: Ես այս քարից լաւը կեանքումն չեմ տեսել: Եւ իսկապէս, լաւ գոհարից էլ լաւ ի՞նչ կարող է լինել: Ո՞հ, որքան սիրում ես գոհարները:

Երբ նա թանկագին քարերի մասին սկսեց խօսել՝ աչքերը փայլեցին: Տարւինն իսկոյն ուշադրութիւն դարձրեց դրա վրայ: Արդեօք հենց այդ չէր այդ կոոչ թոյլ կողմը, մտածեց Տարւինը:

Տարւինը համ լսում էր նրան, համ էլ մտածում, որ եթէ նա այլպէս սիրում է թանկագին քարեր՝ հետեապէս միակ միջոցը, որով հնարաւոր է ստիպել, որ նա ազդի իր ամուսնու վրայ, այդ՝ նրան որևէ հազուագիւտ քար նուիրելն է: Բայց թէ ինչպիսի քար: Ո՞րտեղից ճա-

բել այնպիսի մի թանգ արժեք քար, որը գոհացնէ աւդ հարուստ ու երես առած կնոջը: Տարչուը գիտէր որ զբա համար շատ չնշին բան էր, թէկուզ ամենաթանկագին մի զարդարանք, որը կարելի է գնել գոհարավաճառից: Այդպիսին նրա ամուսինն էլ կառնէր, եթէ նա խընդրէր: Ոչ, այլ պէտք է մի որևէ չըտեսնուած, տարօրինակ բան լինի, որը ոչ ամբողջ Ամերիկայում ճարուի, ոչ էլ հնարաւոր լինի փողով առնելը:

Յանկարծ նրա մէջ մի պայծառ միաք ծագեց: Նա յիշեց, որ մի քանի ժամանակ դրանից առաջ Հնդկաստանից եկած մի մարդ պատմում էր Հնդկական ռաջայի<sup>\*)</sup> ունեցած գոհարեղէնների մասին: Այնպիսի քարեր ամբողջ աշխարհում չըկան, բայց ամենից փառահեղը, անգնահատելին Ռատոր քաղաքի ռաջայի մանեակն է, որը կոչում է «Նառլեակա» և կազմուած է 50 ամենախոշոր քարերից:

Այ, եթէ ինքը կարողանար ձեռք բերել այդ մանեակը և ընծայաբերէր տիկին Մետրին, այն ժամանակ վերջինս կանէր ինչ որ ինքը ցանկանար. Նա կազդէր իր ամուսնու վրայ և երկաթուզու գիծը կանցնէր Տոպազով և իր ծննդավայրը Արևմտեան Ամերիկայի ամենածաղկեալ քաղաքը կը դառնար:

<sup>\*)</sup> Ռաջայ—Հնդկական իշխան:

Եւ ինչու չը փորձել ձեռք բերելու այդ մանեակը: Աշխարհումս անհնարին ոչինչ չը կայ, և նա շատ անգամ էր համոզուել, որ անհնարինը իր համար միշտ էլ հնարաւոր է զարձել, երբ ինքը կամեցել է այդ:

Զէ որ նա հասաւ իր ուզածին—այն՝ որ 28 տարեկան հասակում աշքի ընկաւ Տոպազի բոլոր բնակիչների մէջ և քաղաքային ինքնավարութեան նախագահ ընտրուեց ու հիմա էլ յոյս ունէր պառլամենտի անդամ ընտրուելու: Եւ միթէ չի կարող ձեռք բերել այդ մանեակը և այդպիսով բաղդաւորացնել իր հայրենի Տոպազ քաղաքը:

Սրա համար հարկաւոր է, որ նա Հնդկաստան գնայ, ու այն ժամանակ կետը, նրա թանկագին կետն էլ այնտեղ մենակ չի լինիլ, նա կարող է օգնել նրան դժուար բոպէններին:

Այս բոլորը Տարւինի մտքովս անցաւ վայրկենապէս, այն միջոցին, երբ տիկինը պատմում էր նրան, թէ ինչպէս ինքը թանկագին քարեր է սիրում:

—Ես լսել եմ մի մանեակի մասին, որը ձեզ անպատճառ գուր կրգայ, եթէ դուք իսկապէս որ սիրում էք թանկագին քարեր, հանդարտութեամբ ասաց Տարւինը:

—Իսկապէս, խօսեց տիկինը, ո՞րտեղ է այդ մանեակը:

—Օ՛, շատ հեռու:

—Գիտեմ, Նիւ-Եորքում:

— Զէ, աւելի հեռու:

— Էլ նրաեղ:

— Հնդկաստան:

Նա հետաքրքրութեամբ նայեց Տարւինին:

— Ասացէք, ինզրեմ, այդ ի՞նչ մանեակ է. ճիշտ որ այնպէս փառահեղ է, ինչպէս ասում էք, հարցրեց նա, և Տարւինը նկատեց, որ նրա ձայնը փոխուեց յուզմունքի:

Աշխարհումս էլ նրանից լաւը չը կայ, ասաց Տարւինը:

— Ի՞նչից է շինուած այն:

— Քոհարներից, մարգարտից, սուտակից, փիրուզից. բռունցքի մեծութեան սուտակից ու ձուի մեծութեան գոհարից: Մի ամբողջ թագաւորութիւն արժէ այն:

Տիկինը շունչը կտրեց ու լուց մի փոքր:

— Բայց նրաեղ է այդ մանեակը, յանկարծ հարցրեց նա:

— Ուասոր քաղաքում, ուաջայի մօտ: Ի՞նչ է որ, դուք կը ցանկայի՞ք ունենալ այն:

Տիկինը ծիծաղեց:

— Ի հարկէ:

— Ուրեմն ես ձեռք կը բերեմ ձեզ համար, ասաց Տարւինը:

Նա յետ զցեց իր սիրուն գլուխը և ծիծաղեց աւելի բարձր:

III

Պարոն Մետրը Տոպազում իջևանեց հիւրանոցում, ուր մնաց երկու օր: Տարւինը ու Շերիֆը նրան ցոյց տուին քաղաքը. Տարւինը ճգնում էր ապացուցել, որ երկաթուղու գիծը անպատճառ պէտք է Տոպազով անցկացնել և եթէ այդ անուի, Տոպազը ցոյց կը տայ, որ ի՞նքը արժանի է դրան:

Նա պատմեց նախագահին քաղաքի մասին, ցոյց տուաւ թատրոնը, պոստի գրասենեակը, դպրոցը, գատարանը: Նա իբ ծննդավայրի առեն մի անկիւնը գիտէր և պարծենում էր գրանով: Պարծենում էր նրա լայն փողոցներով, որոնք զարդարուած էին գեղեցիկ ծառերով. ամեն տարի դպրոցի երկսեռ աշակերտների ձեռքով նորոգւում էր ծառատունկը, գրա համար որոշ շուած յատուկ տօնին, ինչպէս որ ընդունուած է Ամերիկայի բոլոր քաղաքներում ու գիւղերում: Դա մանկական ամենամեծ տօնն է:

Բայց և այնպէս Տարւինը տեսնում էր, որ նախագահը չի ցանկանում ճանապարհը Տոպազով անցկացնել: Նրա ամբողջ յոյսը մնացել էր տիկին Մետրի վրայ:

Հարկաւոր է, որ Տարւինը կը կին խօսէր տիկին Մետրի հետ, ու սրա համար էլ նա մի զրօսանք կազմակերպեց դէպի քաղաքի մօտա-

կայ «Տաք աղբիւրները», որին հրաւիրեց տիկոնջը իր ամուսնով, կետին իր ծնողներով և էլի ուրիշ մի քանիսի:

Տարւինն ուզում էր վերջին փորձն անել՝ կետին յետ կանգնեցնելու իր որոշումից ու սրա համար էլ, երբ նրանք գնում էին դէպի «Տաք աղբիւրները», նա շարունակ կետի հետ էր:

—Ես գիտեմ, կետ, որ ձեզ տհաճութիւն է պատճառում, երբ խօսում եմ ձեր Հնդկաստան գնալու մասին, բայց ես ուզում եմ խօսել այդ մասին, ուզում եմ փրկել ձեզ:

—Ի զուր նեղութիւն մի կրէք, հաստատ պատասխանեց կետը:

Երբ ես մտածում եմ դրա մասին, երբեմն ինձ թւում է, թէ ես աշխարհք եմ եկել այդ գործի համար: Դա իմ կատարելիք պարտքս է. եթէ կարող էք՝ օգնեցէք ինձ այդ գործում:

—Ոչ մի կերպ. ես ամբողջ կարողութեամբս կաշխատեմ խանգարել ձեզ: Զեր ծնողները մինչև անգամ չեն կասկածում, թէ դուք ինչ պիսի վտանգի մէջ էք գնում ձեր կեանքը: Ո՞վ պէտք է վոխարինէ ձեզ նրանց համար:

—Ես այդ գիտեմ, բայց թէ այնտեղ ես աւելի եմ հարկաւոր: Ես լսում եմ, որ այնտեղից կանչում են. «Եկ ու օգնիր մեզ», և քանի որ կը լսեմ այդ կանչը, ես հանգստանալ չեմ կարող: Ինձ համար շատ ծանր է մօրս վշտացնելը, և սիրտս գալարւում է այն գիտակցութիւնից, որ չը կարողացայ ծնողներիս համար

անել այն, ինչ որ նրանք սպասում էին ինձանից:

Նրանք ուզում էին, որ ես տուն վերագառնայի ու ապրէի այնպէս, ինչպէս բոլոր օրիորդները ապրում են: Բայց ես այդ անել չեմ կարող, որովհետև համոզուած եմ, որ ինձ համար ուրիշ վիճակ է նախորոշուած: Եթէ ես առհասարակ կարողանայի մնալ որևէ մէկի համար, այդ միայն ձեզ համար կը լինէր, Նիկ:

Բայց ես չեմ կարող այդ անել: Ինչ որ կարող եմ անել ձեզ համար, այդ միայն այն է, որ խօստանում եմ երբէք չամուսնանալ, ուրիշ ոչ մէկի կինը չը լինել:

—Բայց հօ ինձ հետ էլ չէք ամուսնանում, ասաց Տարւինը:

—Ոչ, կարճ ու հաստատ պատասխանեց կետը:

—Բայց ես մենակ ինձ համար չեմ խընդում, որ դուք մնաք: Ես չեմ կարողանում երեկայել, որ դուք ընկնէիք այդ բոլոր վտանգների մէջ մենակ ու անպաշտպան: Դա իելագարութիւն է: Դժբաղդութիւնը մարդկութեան բաժինն է, միթէ դուք կարող էք չքացնել այդ դըրադպութիւնները: Դա նոյնքան անհնարին է, որքան որ ծովը գգալով դատարկելը: Դուք կարող էք միայն ձեզ դժբաղդացնել:

—Ես պէտք է անհմ այն, ինչ որ իմ պարտքս է թելազում, Նիկ: Ես չեմ ասում, թէ կարող եմ մարդկային դժբաղդութիւնը շատ ու շատ պակսեցնել. բայց հենց միայն այն գիտակցու-

թիւնը՝ որ ես գէթ որոշ չափով կը կարողանամ թեթևացնել մարդկանց տաջանքները՝ ինձ համար անչափ ուրախալի կը լինի։ Զէ՞ որ դուք էլ պէտք է այս զգաք, նիկ, ասաց կետը բըռնելով նրա ձեռքը։

— Այս, ես զգում եմ այդ, յուսահատ արտասանեց նա։ Եւ միթէ դուք կարծում էք, թէ ես ձեզ կը սիրէի, եթէ դուք այդպէս չը լինէիք։ Բայց չէ՞ որ ես ձեզ համար եմ մտածում։ Դուք կը կորչէք. թողէք ձեր այդ մտակրութիւնը։

— Զեմ կարող, չեմ կարող, յուսահատ բացականչեց կետը. մի տանջէք ինձ, նիկ։ Եւ խոնարհելով գլուխը, կամաց լաց եղաւ։

— Զէք կարող, դէ լաւ, էլ մի մտածէք դրա վրայ։

Նիկն առաւ նրա ձեռքը ու սկսեց հանգըստացնել։ Այդ ըստէին Տարւինը հրաժարուեց Հնդկաստան գնալու մտադրութիւնից նրան յետ կանգնեցնելու մտքից։ Թող գնայ, եթէ ուզգում է գնալ։ Բայց թէ նա մենակ չը պիտի գնայ…

Գոնէ ձեր հասցէն ասացէք, ինչպէս և որտեղ ձեզ նամակ գրեմ, ասաց Տարւինը։

— Ռատոր քաղաքը, պատասխանեց կետը։ Տարւինը հազիւ կարողացաւ իրեն պահել, որ ցոյց չըտար այդ խօսքերի իրեն պատճառած ուրախութիւնը։ Ուրեմն կետը պէտք է ապրի այն քաղաքում, ուր նառվիական է գտնւում։

Եւ եթէ Տարւինը գնայ այդ մանեակը որոնելու՝ անշուշտ կը պատահի կետին։

Երբ նրանք «Տար աղբիւրներին» հասան, նա օգտուեց առաջին հնարաւորութիւնից տիկին Մետրի հետ խօսելու։ Մինչ Շերիֆը ցոյց էր տալիս նախագահին գետնից դէպի վեր խփող աղբիւրները՝ նա տիկնոջը տարաւ մի այլ կողմ։

Դուք իսկապէս փափագում էք ունենալ այն մանեակը, որի մասին ես խօսեցի, հարցըց նա տիկին Մետրին։

Տիկինը ծիծաղեց։

— Ուզում եմ, ասաց նա. ի հարկ է, ուզգում եմ։ Ես հօ լուսինն էլ կուգէի։

Տարւինը կամաց դիպաւ նրա ձեռքին։

— Դուք կըստանաք այն, ասաց Տարւինը։

Տիկինը ծիծաղը կտրեց ու մինչև անզամ գունատուեց։

— Դրանով դուք ի՞նչ էք ուզում ասել, արագ հարցըց Տարւինին։

— Իսկ դուք ի՞նչ կանէք դրա փոխարէն, շարունակեց նա։

— Ծնկաշոք մինչև Հնդկաստան հասնել, բոլորովին լուրջ պատասխանեց ափկինը։

— Լաւ, շատ լաւ. դէ լսեցէք ուրեմն։ Դուք կըստանաք այդ մանեակը, եթէ «Երեք ընկերակցութիւն» ընկերութիւնը երկաթուղու գիծը անցկանցնի Տոպազով։ Համաձայն էք սրան։ Կարող ենք այսպիսի պայման դնել։

— Բայց դուք հօ այն ճարել չէք կարող։

— Բանն այդ չէ: Ես կաշխատեմ. իսկ դուք  
կը կատարէք:

— Դուք ուզում էք ասել, թէ ես փոխա-  
րէնը իմ ամբողջ ոյժս պէտք է գործ դնեմ ա-  
մուսնուս վրայ, որ նա երկաթուղու գիծը անց-  
կացնի ձեզ քաղաքով, հարցընց տիկին Մետրը:

— Այս, վճռական պատասխանեց Տարւինը.  
համաձայն էք:

Տիկինը թեքեց իր սիրուն զլուխը դէպի  
նա ու սկսեց նայել նրան:

— Այս: Ես ինչ որ ասեմ ամուսնուս, այն  
էլ ապահովուած կարելի է համարել, ասաց նա:

— Ես իսկոյն հասկացայ այդ: Ուրեմն հա-  
մաձայն էք:

— Լաւ, պատասխանեց նա:

— Տուէք ձեր ձեռքը:

Նրանք ձեռք ձեռքի տուին ու երկար նա-  
յեցին իրար:

— Ուրեմն, իսկապէս դուք այն կը ճարէք  
ինձ համար, հարցընց տիկինը:

— Կը ճարեմ:

— Ինձ չէք ծաղրում:

— Ո՞չ:

Տարւինը այնպէս ամուր սեղմեց նրա  
ձեռքը, որ նա ճշաց:

— Ոչինչ, ես վաղը կուղեորուեմ չնդկաս-  
տան, ասաց Տարւինը:

IV

Տարւինը կատարեց իր խոստումը. հե-  
տևալ օրը ճանապարհ ընկաւ: Ամբողջ քաղա-  
քում նա ոչ ոքի չասաց, թէ ուր է գնում:  
Մենակ տիկին Մետրը գիտէր այդ մասին, որև  
խոստացել էր ոչ ոքի չասել:

Տարւինը նրան խնդրեց, որ ընտրութիւն-  
ները վերջանալուց յետոյ իրեն հեռագրի, թէ  
ով է պառլամենտի անգամ ընտրուել: Թէ և  
նրա համար ծիծագելի էր, որ նա դրա հա-  
մար մի կնոջ է խնդրում, բայց բանն այն էր,  
որ ոչ ոք նրա հասցէն չը պէտք է իմանար բա-  
ցի տիկնոջից:

Տարւինը երկար ճանապարհորդեց: Սկզբում  
նա շոգենաւով գնաց, յետոյ երկաթուղով ու  
վերջապէս հասաւ այն կայարանը, ուր վերջա-  
նում էր երկաթուղին և սկսում ամայի, աւա-  
զուտ ու արևակէզ մի անապատ:

Տարւինը վարձեց մի հասարակ եզնասայլ,  
որը և նրան այդ անապատով հասցընց Ռատոր  
քաղաքը: Եզները շատ դանդաղ էին առաջ գնում:  
մի ժամում անցնում էին ընդամենը երկու  
վերստ:

Նրանք գնում էին ցամաքած գետի հունի  
կարմիր ու տաք աւագի վրայով, իսկ հունի եր-  
կու կողմերով ձգում էին աւագուտ ափերը:

Հնդկաստանի մշտավառ արել փայլում էր առապատի վերեից, և նրա շողերի տակ աւազը փայլում էր այնպէս շլացուցիչ, որ նայելուց մարդու աչքեր էին ցաւում:

Տարւինը սայլի մէջ նստած մտածում էր, թէ հիմա սրտեղ կարող է լինել կետը: Նա գիտէր, որ կետը պէտք է Տոպազից դուրս գար իրենից մի օր յետոյ: Բայց թէ նա, մի մենակ աղջիկ, չէր կարող այդ երկար ճանապարհորդութիւնը այնպէս արագ կատարել, ինչպէս տղամարդը:

Գուցէ և կետը ճանապարհին կանգ է առել հանգստանալու: Բայց և այնպէս մի քանի օրից նա էլ կը լինի Ռատորում, զէպի ուր սայլը տանում էր Տարւինին: Նա ծիծաղեց, երբ մըտքովն անցաւ իրենց հանդիպումի մասին՝ մտածելով, որ կետը չի էլ կասկածում, որ Տարւինը կարող է Հնդկաստան լինել:

Չորս օրից յետոյ, երբ Տարւինը արդէն մտածում էր, թէ երբէք Ռատոր չեն համար՝ սայլը մի կիրճ մտաւ, որ գտնուում էր երկու սարերի մէջ ու կանգ առաւ կարմիր քարաշէն մի տան առաջ: Դա հիւրանոց էր:

Տարւինը իջաւ սայլից, իրենից թափ տուաւ ոտից մինչև գլուխ պատած փոշին ու բարձրացաւ պատշգամբը: Այստեղ պառկած էին մի քանի մարդ, ըստ երեսյթին, անզլիացիներ:

Նրանք բոլորն էլ հագած էին սպիտակ թո-

փանցիկ հագուստ, բայց և այնպէս նեղուում էին անտանելի շոքից:

— Բարե՛, պարոններ, ասաց Տարւինը:

Ոչ ոք տեղից չը շարժուեց ու միայն մէկը զիվով արաւ: Ծառան ազատ սենեակ ցոյց տուաւ նրան: Եւ երբ Տարւինը լուացուած ու շորերը փոխած պատշգամբ վերագարձաւ ու նստեց մի բազկաթոռի վրայ՝ պառկածներից մինը շուռ եկաւ դէպի նա ու հարցրեց.

— Իսկ դուք ի՞նչ գործով էք եկել այստեղ:

— Ես եկել եմ իմ սեպհական գործերով ու ճանապարհորդում եմ անձնական բաւականութեան համար, պատասխանեց Տարւինը, որը, ի հարկէ, չէր կարող յայտնել իր ճանապարհորդութեան իսկական նպատակը: Բայց դեռ չը վերջացրած իր ասելիքը՝ բոլորն էլ բարձրածայն ծիծաղեցին:

— Բաւականութեան համար... գոչեց նրանցից մէկը. օհ, Տէր Աստուած, բաւականութեան համար, զէ, ուրեմն դուք այստեղ չէք եկել, ուր որ հարկաւոր էր:

— Լաւ տեղ էք ընկել, ասաց միւսը. այստեղ աւելի շուտ կարելի է մեռնել, քան թէ որևէ գործ անել: Ամբողջ մի շաբաթ է մենք նստած ենք այստեղ, բայց այնուամենայնիւ ոչինչ չենք արել:

— Ինչու, պարոններ, ձեր գործն ի՞նչ է որ, հարցրեց Տարւինը:

Նրանք Տարւինին պատմեցին, որ բոլորն

էլ զանագան առետըրական տների գործակատարներ են Հնդկաստանի գլխաւոր քաղաքից եկած: Նրանք ամեն տարի գալիս են այստեղ, որ գոնէ մի բան կարողանան ստանալ տեղացի ուշայի հաշիւներից, որը փթթերով պատուերներ է տալիս ու մսխալներով էլ չի վճարում:

Ինչ ասես առնում էր նա. հրացաններ, շորեր, հայելիներ, զարդարանք, կառքեր, անուշահոտ իւղեր, Փարֆորէ իրեր, առնում էր բոլորը դիւժիններով իր արքայական քմահաճոյքի համար: Բայց թէ շուտով բոլորը նրան ձանձրալի էին գառնում ու ոչինչ չէր գրաւում նրան 20 րոպէից աւելի. իսկ երբ նա մի բանով չէր հետաքրքրուում նրա համար վճարելու ցանկութիւնն էլ կորչում էր:

Գործակատարները աշխատում էին ճանկել նրան որսի գնալիս, որովհետեւ առաջին մինիստրին անգամ դիմելով՝ այնուամենայնիւ ոչինչ ստանալ չեն կարողանում: Նրանք դիմեցին անգլիական պետական ներկայացուցչին—գնդապետ Նուլանին, բայց վերջինս յայտնեց, որ տուանց իր բարձրագոյն իշխանութեան հրամանի \*) ինքը

\*) Հնդկաստանը Անգլիային է պատկանում: Նա մի քանի թագաւորութիւնների է բաժանուած, որը կառավարում են ուշաները: Մաջաները ծագումով հնդիկներ են, բայց նրանց կառավարելուն հակում են անգլիական պետական ներկայացուցիչները: Բայց դրանցից՝ ամբողջ Հնդկաստանի գլուխ է կանգնած փոխարքան, որը ծագումով անգլիացի է:

ոչինչ անել չի կարող: Այսպէս, այս խեղճ մարդիկ մնում էին այստեղ ու ոչինչ չին կարողանում անել, մինչդեռ նրանց տէրերը ամեն օր նախատական նամակներ էին գրում նրանց, որ նրանք չեն կարողանում փողն ստանալ:

Մաջայի հետ այսպիսի մշտական կոիւր այնպէս էր ձանձրացրել նրանց, որ որոշել էին նոտել այստեղ ու համբերութեամբ սպասել այնքան, մինչև որ նա բարեհաճէր վճարել գունէ հաշիւների մի մասը:

Նրանք շատ անգամ էին դիմել բարձրագոյն իշխանութեան, բայց վերջինս բոլորովին չէր ուզում ուշային ստիպել վճարելու: Կառավարութիւնը այսպէս էր կարուում, որովհետեւ գիտէր, որ ուշան մտադիր է անգլիական ծառայութեան համար նոր գունդ կազմել, որի պատճառով չէր ուզում բարկացնել ուշային: Կառավարութիւնը գործակատարներին էր թողել վերջացնել իրենց գործերը, ինչպէս որ ուզում են: Անգլիական կառավարութեանը ամեննեին ձեռնուու չէր իր դէմ զինելու ուշային, որովհետեւ վերջինս կը դադարէր այլիս խոշոր նուիրաբերութիւններ անել նրանց բարեգործական հիմնարկութիւններին:

Եթէ ուշան այնքան հարուստ է, որ կարող է ամբողջ գունդ պահել, էլ նրա համար ինչ բան է պարագերը վճարելը, նկատեց զարմացմամբ Տարւինը:

— Օ՛, նա վճարել ամեննեին չէ սիրում, որով-

հետեւ դրանից ոչ մի շահ չունի, ասաց գործակատարներից մինը, իսկ եթէ նա որևէ բան է անում անգլիացիների համար՝ գիտէ, որ դրա համար կառավարութիւնը նրան աղամանդէ շքանշան կը շնորհէ կապոյտ թաւշէ ժապաւէնի վրայ: Իսկ սրա համար նա պատրաստ է ամեն բանի, որովհետեւ հնդիկները սաստիկ փառասէր մարդիկ են:

Տարւինը ուշագրութեամբ լսում էր ու համոզւում, որ այս երկիրը բոլորովին նման չէ իր հայրենիքին. այս բոլորը նրա համար նորութիւններ էին: Նա հասկացաւ որ այստեղ մարդ մշտապէս կանգնած է մի կողմից բթամիտ ու կիսավայրենի ոաջայի, միւս կողմից խորամանկ անգլիական ներկայացուցչի միջև ու չի կարող մի քայլ անգամ անել, որ չ'ընդհարուի նրանցից մէկի կամ միւսի հետ:

Դործակատարների պատմածների շարունակութիւնից պարզուեց Տարւինի համար, որ այս երկրում մեծ գեր են խաղում ոաջայի կանայք: Թէ այդ կանայք բոլորը փակուած են պալտում ու երեք ոչ որի չեն երեսում, բայց և այսպէս ով որ ուզում է ոաջայից մի բան ստանալ՝ պէտք է նրա կնոջ տրամադրութիւնը գրաւի:

Ուաջայի սիրած կինը, ուրեմն և թագուհին, մի գնչուհի էր, որի ոչ ցեղն էր յայտնի, ոչ էլ ազգը. հենց դրան էր, որ աստուածացնում էր ոաջան: Նա մէկ տարուայ ընթացքում իրեն

հպատակեցրեց թէ ուաջային և թէ նրա ամբողջ թագաւորութիւնը: Նրա ամենաչնչին ցանկութիւնը ուաջան իսկոյն կատարում էր:

Նրանից մի որդի ծնուեց, որից յետոյ նա սկսեց աւելի բնդարձակել իր իշխանութիւնը, որովհետեւ ուզում էր, որ ուաջայից յետոյ իր որդին թագաւորէր. մինչդեռ ուաջան որդի ունէր առաջին կնոջից, որը և այդ երկրի օրէնքով թագաժառանգ էր համարւում:

Անգլիայի ներկայացուցիչ գնդապետ նոլանը գիտէր, թէ որքան հզօր է ուաջայի կինը և շատ անգամ էր նրա յանդգնութիւնները տարել: Ուրեմն, որպէսզի որեէ բանի կարելի լինի համեմ, պէտք է նախ գրաւել այդ թագուհուն, որի անունն էր Սիթաբգայա:

—Բայց միթէ գուք չէք կարող պարտքերի տեղ գրաւել ուաջայի գոհարեղէնը, հարցրեց Տարւինը գործակատարներին:

—Օ՛, գուք հնդկական ուաջաներին չէք ճանաչում: Նրանք ոչ մի կերպ թոյլ չեն տայ իրենց գոհարեղէններին դիպչելու, որովհետեւ դրանք նրանց համար սրբութիւն են:

—Բայց ի՞նչ տեսակ գոհարներ են դրանք, հարցրեց Տարւինը:

—Երբեկիցէ լսէլ էք նաուլեակայի մասին: Տարւինն աշխատեց հանգիստ երեալ նրանց, բայց սիրածն սկսեց արագութեամբ բաբախել, երբ լսեց նաուլեակայի անունը, այն մանեակի, որի համար եկել էր այս անտանելի երկիրը: Սակայն

իրեն չըմատնելու համար՝ այնպէս ցոյց տուաւ,  
որ իբր թէ չի հաւասառմ, որ այդպիսի բան գո-  
յութիւն ունենայ:

— Նառակեակայի մասին եղած բոլոր պատ-  
մութիւնները հէքեաթներ են, ասաց նա:

— Չեմ կարծում, պատասխանեց գործակա-  
տարը. երբ ես վերջին անգամ ուածայի մօտ էի,  
նա ինձ ասաց, որ հառական ցոյց է տուել  
անգլիական փոխարքային, և վերջինս միակ  
օտարազգին է, որ տեսել է այդ հրաշալիքը, ու  
ոչ ոք էլ չը գիտէ, թէ որտեղ է պահւում այն:  
Ամենից հաւանականն է, որ Ռատոր քաղաքի  
որեէ տաճարում պահուելիս լինի այն:

Տարւինը հակառակ իր բուռն ցանկութեան  
ծածկելու իր յուզմունքը, անկարող եղաւ չը  
հարցնել, թէ որտեղ է Ռատոր քաղաքը:

Նրան ցոյց տուին մի ժայռ, որը շրջապա-  
տուած էր եռակի պարսպով: Այդ ժայռի վրայ  
շինուած էր քաղաքը, որի շուրջն էլ տարածւում  
էր չոր, աւազոտ անապատ: Ահա այդտեղ, այդ  
պարիսպների յետեւում էր պահւում հառակա-  
կան, ուր մի քանի օրից յետոյ պէտք է աշխա-  
տէր իր փոքրիկ կետը:

Այդ բոպէին քաղաքը մեռած էր թւում,  
որովհետեւ կէսօրից յետոյ էր և բոլոր բնակիչ-  
ները քնած էին: Այստեղ, այս անտանելի շոքե-  
րի աշխարհում, ինչպէս երեւում է, բնակիչները  
օրուայ մեծ մասը քնով են անցկացնում: Տար-  
ւինը վախեցաւ, թէ այդ ընդհանուր քունը իրեն

էլ կազզի: Դրանից խուսափելու համար, նա  
պէտք է, որքան հնարաւոր է, շուտ գործի կե-  
նար:

Տարւինը հարցրեց հեռագրակայարանի ճամ-  
բան. ներկայ եղողներից մինը զգուշացրեց նրան  
ասելով, որ այստեղ ամեն մի հեռագիր նախ  
քան ուղարկելը ցոյց է տրում ուածային:

Տարւինը ի նկատի առաւ այդ, ու աւազու-  
տով գիմնեց գէպի հեռագրատուն, որը գտնւում  
էր քաղաքի պարսպի մօտ:

Հեռագրատունը մի կիսախարխուլ շէնք էր:  
Նա բարձրացաւ մութ սանդուղքով ու կանգ  
առաւ, ականջ զնելու, թէ արդեօք չի լրս-  
ւում հեռագրող ապագրատի շխչխկոցը: Բայց  
գերեզմանային լուսթիւն էր տիրում այստեղ:  
Նա գուռը բացեց, ներս մտաւ սենեակը և մնաց  
շուարած: Այստեղ էլ լուս էր, բայց անկասկած  
էր, որ հեռագրատունն այս էր, որովհետեւ սե-  
ղանի վրայ գրուած էր ապագրատը:

Լոյսը տանիքից էր ընկնում, որտեղ անցը  
էին բացել հեռագրաթելերը անցկացնելու հա-  
մար, և յետոյ էլ չէին ծածկել այդ անցքը:  
Ամենուրեք փոքի էր ու սարդի ոստայնները:  
Ինչպէս երեւում էր, այս աշխարհում մարդիկ  
շատ քիչ էին օգտուում հեռագրից:

Յատակի վրայ տարածուած էր մէկը, որին  
ձայն տուաւ Տարւինը: Նա բարձրացաւ տեղից  
ու յայտնեց, որ ինքը տեղական պոստ-հե-  
ռագրատան կառավարիչն է: Տարւինն ա-

սաց, թէ ինքն ուզում է հեռագիր տալ. հեռագրատան պաշտօնեան նստեց մի կոտրած աթոռի վրայ ու երկար փնտոեց հեռագրաթերթը: Ոչ թանաք կար և ոչ էլ մատիտ: Բացի սրանից հնդիկը մը այնպիսի քնաթաթախ դէմք ունէր, որ Տարւինը նրան առաջարկեց նորից պառկել, իսկ հեռագիրը թողնի, որ ինքն տայ:

— Ոչ, մեր ապպարատներով ամեն մարդ չի կարող հեռագրել ասաց պաշտօնեան. պէտք է նախ սովորել նրանց վրայ՝ յետոյ, դուք գրեցէք, ես կը հեռագրեմ:

Տարւինը հանեց մատիտը ու գրեց. «Տեղ հասայ, յիշեցէք ձեր խոստումը. Տարւին»: Հեռագիրը ուղղուած էր տիկին Մետրին:

— Դէ, հեռագրեցէք, ասաց նա պաշտօնեային:

— Օ՛, մի անհանգստանաք, ես կը հեռագրեմ, դուք կարող էք ապահով գնալ, պատասխանեց հնդիկը: Բայց Տարւինը ստիպեց իր ներկայութեամբ հեռագիրը տալ՝ իմանալով, որ այս երկրում ոչ ոքի հաւատ ընծայել չի կարելի:

Հեռագիրը տալուց յետոյ, հնդիկը սկսեց քրքրել սեղանի արկղը և այնտեղից մի փոշուած հեռագիր հանեց ու տուաւ Տարւինին:

— Արդեօք դուք չէք ճանաչում Տարւին ազգանունով որևէ նորեկի, հարցրեց նա:

Տարւինը նայեց հասցէին, ու պատռելով ծրարը, տեսաւ, որ տիկին Մետրի ուղարկած հեռագիրն է այդ: Նա շնորհաւորում էր Տարւինին,

որ 1518 ձայների մեծամասնութեամբ ընտրուած է պառլամենտի անդամ:

Տարւինը ուրախութիւնից ճշաց: Այսպէս ուրեմն, նրա իրձերից մէկն արդէն իրականացած էր: Նա հասաւ դրան: Նա ուզում էր, որ ընտրեն իրեն, և ընտրուեց: 28 տարեկան հասակում լինել պառլամենտի անդամ — սա հանաք բան չէ:

Ուրախ ժպիտով Տարւինը գլուխ տուաւ հեռագրատան պաշտօնեային, որուս թուաւ կայարանից ու գնաց հիւրանոցը տանող ճանապարհով:

## V

Հետեւալ օրը առաւօտեան զարթնելով, Տարւինը որոշեց ամենից առաջ այցելել այստեղի քահանային, որովհետեւ յոյս ունէր, որ նա կարող է իրեն ներկայացնել ուաջային ու մի բան պատմել նառլեակայի մասին:

Քահանայի տունը հենց քաղաքի պարսպի մօտ էր: Նա շինուած էր կարմիր քարից. մօտը ոչ ծառեր կային, ոչ էլ ծաղիկներ: Տարւինը շատ ջերմ ընդունելութիւն գտաւ այդտեղ:

Քահանայի կինը, տիկին էստեսը, այնպիսի բարի կանանցից էր ու այնպիսի տնտեսներից, որոնք նկուղներն էլ դուրեկան բնակարան են զարձնում: Մի քանի բոպէից յետոյ, Տարւինը արդէն իրեն այնպէս էր զգում, ինչպէս իրենց

տանը. նրան հրաւիրեցին նախաճաշի: Նախաճաշի վրայ քահանան պատմեց հիւրին, թէ ինչ դիրք ունի ինքը Ռատորում: Շարունակ նրա և ուղայի ու նրա կանանց միջև դժգոհութիւններ էր պատահում ու իր բոլոր աշխատանքներն անօգուտ անցնում:

Սա մի սարսափելի երկիր էր, որտեղ ամենազործունեայ մարդու ձեռքերն էլ թուլանում էին: Հնդկները թշնամաբար էին վերաբերում գէպի սպիտակները, ու վերջիններիս բոլոր ցանկութիւնները—որ և է բան սովորցնել կամ օգնել նրանց—հանդիպում էին նրանց անվատահութեանն ու թշնամանանքին:

— Իսկ գուշ ի՞նչ գործով էք եկել այստեղ, հարցրեց քահանան:

— Միթէ մարդիկ այստեղ են գալիս անպայման որևէ գործով, ասաց Տարւինը:

— Ի հարկէ, ժպտաց քահանան. Ես չեմ կարծում, թէ որևէ մէկը կարող է այստեղ գալ միմիայն անձնական բաւականութեան համար: Ու, բացի դրանից, անգլիական կառավարութիւնն էլ արգելում է այստեղ ապրել առանց որոշ զբաղմունքի: Հաւանօրէն դուք որևէ նպատակն էք եկել:

Տարւինն, ի հարկէ, չէր կարող իր գալու իսկական նպատակը յայտնել. սրա համար էլ ասաց ինչ որ բերանն եկաւ:

— Ես որոնումներ եմ անում:

— Երկի ոսկեհանք էք որոնում ու մեծ գործեր էք սկսելու:

— Այս, ի հարկէ, ասաց Տարւինը չափազանց ուրախացած, որ քահանան ինքն էր թելալղում նրա այստեղ մնալու պատճառները: Եւ նրա զլխում մի միտք ծագեց, թէ ինչու, իսկապէս, ինքը չը սկսի ոսկի որոնել, որը անշուշտ կարելի է գտնել այստեղ: Նախ որ այդ ձեռվ նա կը խուսափի անգիտական կառավարութեան ու ուղայի կասկածից, և երկրորդ կը շահագործի այն ժամանակը, որը նա պէտք է կորցնի նապուեակայի որոնման համար:

Տարւինը քահանային ինդրեց, որ իրեն ներկայացնի ուղային, նա էլ սիրով համաձայնեց: Նրանք ձի նստեցին ու ճանապարհուեցին քաղաք: Քաղաքը իր աղքատութեամբ ու կեղտուութեամբ շատ վատ տպաւորութիւն թողեց Տարւինի վրայ: Ամենուը էք խմբուած էին զինուորներ, կեղտոտ ցնցոտիներով երեխանները մարդու ոտքի տակ էին ընկնում, առետրականները մի գլուխ գնորդների էին կանչում իրենց խղճուկ խանութները. հենց այդտեղ էլ, փողոցներում, թաւաներ գրած՝ ինչ-որ բան էին տապակում: Անտանելի շոք ու փոշի էր:

Մի քանի փողոց անցնելով՝ նրանք բարձրացան մի գիք ժայռ, ուր կանգնած էր այդ ժայռից կերտած պալատը: Նրանք մտան սպիտակ մարմարով մայթած բակը ու այդտեղ տեսան ուղային, որը ծառայի հետ խօսում

էր իր առաջ պառկած շան առաւելութիւնների մասին:

Տարւինը մնաց աւլցած, երբ ուաջային տեսաւ: Նա այնքան բաներ էր լսել նրա անչափ հարստութեան, նրա գոհարեղէնների մասին, որ միշտ երևակայում էր նրան շքով ու փայլով շրջապատուած մի թագաւոր և պատրաստւում էր մեծ յարգանքով վերաբերուելու ուաջային: Եւ յանկարծ նա տեսնում է հաստ, սեահեր ու երկար մօրուքով մի մարդու, մի անձունի ու կեղտոտ թաւշէ խալաթ հազին: Նրա ուռած ու բթամիտ դէմքը, թաւ յոնքերի տակից շուրջը նայող աչքերը բացի անչափ յոդնածութիւնից ու ծուլութիւնից ուրիշ ոչինչ չէին արտայայտում:

Ուաջան շատ բաւական էր, որ վերջապէս տեսնում է մի մարդ, որը ոչ մի յարաբերութիւն չունի անզլիական կառավարութեան հետ ու իրենից փող չի պահանջում: Սրա համար էլ նա Տարւինին շատ սիրալիք ընդունեց: Տարւինի գրաւշութեանը սահման չը կար. նա լաւ ու գեղեցիկ խօսում էր, ու շատ գուր եկաւ ուաջային: Այդ գրաւիչ օտարերկրացուն, որը զանազան պատմութիւններ էր անում այլ երկրներում ապրող սպիտակ մարդկանց մասին, նորին մեծութիւնը մի ինչ-որ հնդկական խաղ սովորեցրեց, որ կոչում է պոչիզի, ու նրանք մինչև երեկոյ խաղում էին պալատի մարմարամալթ բակում:

Բակը չորս կողմից շրջապատուած էր շինութիւններով, ուր ապրում էին ուաջայի կանայք: Եւ մինչդեռ Տարւինը խաղում էր ուաջայի հետ, կանաչ փեղկերի ետևից, որով ամբողջ ժամանակ ծածկուած էին բոլոր պատուհանները, լսում էր գողունի նայող կանանց մետաքսէ հանդերձների խշխցոցը: Տարւինը տեսաւ, որ պալատից հազար աչք է նայում:

Հետեւեալ օրը Տարւինը միանգամայն զըրկուեց թագաւորի շնորհից ու իմացաւ, որ սրա պատճառը զիսաւոր թագուհի Սիթաբգայան է, որը կատաղել էր թագաւորի վրայ, որովհետեւ վերջինս այնպէս լաւ է վերաբերուել իրեն:

Սակայն երեկոյեան դէմ, ինչպէս երեսում էր, արքայական շնորհը նորից վերսկսուեց, որովհետեւ ուաջան Տարւինի մօտ ուղարկեց իր զիսաւոր դեսպանին ու կանչեց իր մօտ պոչիզի խաղալու:

Այդ երեկոյեան ուաջան մի երկար ու անկեղծ պատմութիւն արաւ իր ու իր պետութեան դժուար կացութեան մասին: Նա ասաց, որ ինքը իրան բոլորովին իր երկրի տէրը չի զգում:

— Այս պետութեան մէջ ես ոչինչ չունեմ: Առեւրատկանները օր ու գիշեր կանգնած են զըրներիս մօտ: Անգլիայի ներկայացուցիչը չի թողնում նրանցից հարկ առնեմ, ինչպէս առնում էին իմ հայրերը: Ես իսկական զօրք չունեմ, և եթէ ունենայի էլ ես ոչ ոքի հետ չը պէտք է կոռւէի: Մի խօսքով ես մի ծեր գայլ եմ, որի բոլոր ա-

տամները հանած են: Ես իմ երկրի կառավարողն եմ, բայց տեսնում էք, իմ եկամուտիս քառորդը նրա հաւաքողներն են կլանում, քառորդը մնում է անապատի բնակիչների վրայ, որոնք չեն ուզում վճարել, քառորդը գնում է անգլիական պաշտօնեաների ծախսերը ծածկելու, որպէսզի ինձ թողնեն ազատ ապրել ու շունչ քաշել: ու միայն մի քառորդն եմ ես ստանում: Այս, ըստ երևոյթին ես շատ հարուստ թագաւոր եմ, բայց իսկապէս դրա հակառակն է:

— Ի՞նձ թւում է, թէ ես կարող եմ օգնել ձեզ ձեր եկամուտները աւելացնելու, ասաց Տարւինը:

— Ի՞նչպէս կարող էք այդ անել:

— Ձեր Ամեթ գետում շատ ոսկի կայ, և եկել եմ այնտեղ հետախուզութիւններ կատարելու:

Ուաջան տարակուսանքով նայեց Տարւինին:

— Գնացէք այդ մասին խօսեցէք կառավարութեան հետ, մըմոաց նա:

— Բայց, կարծեօք, ձեր գետն է այն, ուրախ պատասխանեց Տարւինը:

— Ես ձեզ արդէն ասացի, որ ես այստեղ ոչինչ չունեմ. պէտք է կառավարութեանը հարցնել:

— Զեմ կարծում, թէ նա խառնուի այս գործին: Զէ՞ որ դուք այստեղ ոսկի որոնելու փորձ արել էք արդէն, այնպէս չէ:

— Այս, պատասխանեց ուաջան. մի անգամ

ամառը գետում այդպիսի մի չնչին գործ սկսեցինք: Իմ բանտերում բաւական շատ յանցագործներ էին հաւաքուել, ես էլ վեր առայ ուղարկեցի աշխատելու: Բայց ոչ մի հետեանք չունեցաւ, և բացի այդ շատ անհետաքրքրական աշխատանք էր այն:

Տարւինը անյարմար զգաց իրեն: Միթէ կարելի է մի բթամիտ մարդու հետ խօսել լուրջ գործերի մասին: Ինչպէս երեսում է, նա գետում այդ աշխատանքը սարքել էր միմիայն իր համար մի հետաքրքրական տեսարան ստեղծելու համար: Նա հարիւրաւոր մարգկանց սահպէլ է օր ու գիշեր ուժապառ լինել, որպէսզի հրձելով այդ տեսարանով ցրի այն սպանիչ տաղտկութիւնը, որ այնքան ձանձրալի է իր անգործութեան մէջ:

Բայց և այնպէս Տարւինը վճռեց իր նպատակին համեմել:

— Օ՛, ի հարկէ, այնպիսի աշխատանքները հետաքրքրական լինել չէին կարող, ասաց Տարւինը: Դուք պէտք է Ամեթում աւազան շինէք, ահապին աւազան, այնպէս որ նրա ամբողջ յատակը 12 վերստ տարածութեամբ երեալիս լինի:

— Իսկ նրա ջնորը ուր պիտի գնայ, հարցրեց թագաւորը: Այս խօսքերից Տարւինը նկատեց, որ այդ գործը ուաջային սկսում է հետաքրքրել:

— Մի ուրիշ կողմ կանցկացնեմ: Կառավա-

րութիւնը ոչինչ չի ասիլ, մանաւանդ որ այդ ձեր ժողովրդի շահերին կը ծառայի:

— Եաւ, համաձայն եմ, խօսեց ուաջան:

— Ուրեմն հենց վաղը և եթ կըսկսեմ, ասաց Տարւինը: Սա շատ հետաքրքրական կը լինի: Յուսով եմ, որ դուք այդ աշխատանքի համար մի քանի հարիւր յանցագործներ կը տաք ինձ:

— Թէկուզ իմ բանտերի բոլոր յանցագործներին վերցրէք, բաւականութեամբ ասաց ուաջան: Բայց միթէ դուք միայն նրա համար էք եկել, որ յացնեք իմ գետերը և հիմնովին շրջէք իմ թագաւորութիւնը:

Տարւինը Ժպտաց: Իմանալով ուաջայի փառասիրութիւնը, նա վայրկենապէս այնպիսի մի պատախան պատրաստեց, որ ուաջային անպայման պէտք է դուք գար:

— Ես եկել եմ միայն ձեզ տեսնելու, ասաց նա: Ես շատ բան եմ լսել ձեր մասին մեր երկրում:

— Միթէ, ասաց ուաջան, ու նրա քնոտ գէմքը փայլեց ինքնաբաւական ժպիտով: Նշանակրում է, իմ պալատականները ճիշտ են ասում, որ իբր թէ իմ համբաւը յայտնի է աշխարհիս չորս կողմը:

Այս խօսակցութիւնը տեղի էր ունենում բակումը, պալատի այն մասի դիմաց, ուր գտնւում էին Միթաբգայի սենեկները: Տարւինը դարձեալ զգաց, որ պատուհանի փեղկերի ետե-

ւից ինչ-որ մէկը հետեւում է նրանց խօսակցութեանը: Նա լսում էր ինչ-որ շնչառութիւն, շորերի խշացոց, փեղկերի մեղմ ճոխնչ: Այս խորհրդաւորութիւնն ու ծածուկ լսելը վատ աղդեց նրա վրայ:

Ուաջայի գէպի Տարւինը տածած համակրանքի հետեւաքն այն եղաւ, որ նրա հիւրանոցն էին գալիս ուաջայի բոլոր մօտիկ անձինք, բոլոր նրա մինիստրները, և նրանցից ամեն մէկը Տարւինին խորհուրդ էր տալիս՝ իրենից բացի ոչ ոքի չո հաւատալ: Նրանցից իւրաքանչիւրը հաւատացնում էր Տարւինին, որ ինքը նրա բարեկամն է ու մեղադրում էր իր մերձաւորին տեղական և անգլիական կառավարութեանց գէմ կատարած բազմատեսակ ոճիրների համար:

Մինիստրները չէին իմանում, թէ Տարւինը ինչ նպատակով էր իրենց երկիրը եկել: Նըրանք այն գիտէին միայն, որ նա միշտ լինում է ուաջայի մօտ, զրուցում հետը ամբողջ ժամերով և ուաջան էլ լսում էր նրան:

Բոլոր այդ խայտարդէտ հագուստներով մարդիկ յոգնեցնում ու ձանձրացնում էին նրան իրենց խորածանկութեամբ ու շողոքորթութիւններով: Նա գիտէր, որ նրանց ոչ մէկի խօսքին հաւատալ չի կարելի. բացի այդ՝ նրանք չափազանց կասկածելի էին և գաղտնապահ, այնպէս որ չը նայած Տարւինի ճիգերին, այնուամենայնիւ շը

կարողացաւ նրանցից նառւեակայի մասին մի  
խօսք անգամ լսել:

Իր այստեղ համնելուց մի քանի օր յետոյ,  
մի օր Տարւինը առաւօտեան արթնանալով, իր  
պատուհանի տակ մի հնչուն մանկական ձայն  
լսեց, որը կանչում էր իրեն։ Բանից զուրս ե-  
կաւ, որ դա ռաջայի որդին ու ժառանգն էր  
կենւարը, որը ձանձրոյթ զգալով պալատում՝  
հրամայել էր լծել իր կառքն ու քշել դէպի.  
այն անգիտացու հիւրանոցը, որը ինչպէս նրան  
պատմել էին պալատականները, կարողացել էր  
մինչև անգամ իր հօրը ծիծաղեցնել։

Տարւինը պատշգամբ դուրս եկաւ ու տե-  
սաւ մի կառք, որ սկզբում նրան դատարկ  
թուաց, ու տասը զինուորից բաղկացած մի  
պահակ։ Ահագին կառքից դուրս էր նայում  
ինը տարեկան մի փոքրիկ տղայ։

— Ի՞նչպէս է ձեր առողջութիւնը, ասաց նա։  
Ես պետութեան ժառանգն եմ, կենւարը, ու մի  
օր պէտք է թագաւոր դառնամ։ Համեցէք ինձ  
հետ գնանք զբօսնելու։

Նա իր նիհար ձեռքը մեկնեց դէպի Տարւինը։

Երեխան հագած էր կոշտ ոսկեհուռ շորեր։  
գոհարազարդ չալման փայլփլում էր, իսկ ճա-  
կատը պատռւմ էր զմրուխտի շարանը, որի տա-  
կից երկում էր նրա հիւրանգոտ ու դալուկ դէմքը  
և սե, խոշոր աչքերը։

Տարւինը կառք նստեց ու նրանք՝ գնացին  
միասին։ Ճանապարհին կենւարը շարունակ հարց

ու փորձ էր անում նրան, թէ ով է նա և ին-  
չու է եկել։ Տարւինը պատմում էր նրան իր  
հայրենիքից ու իր կենդանի պատմելովը կարո-  
ղացաւ այնպէս հետաքրքրել երեխային, որ սա  
խնդրեց ամեն օր պալատ գալ և իր պատմու-  
թիւններով իրեն զուարձացնել։

Տարւինը ժպտաց, տեսնելով, որ այդ երե-  
խան այնպէս էր նայում մարդկանց վրայ, որ  
իբր թէ նրանք ստեղծուած են միայն իրեն  
զուարձութիւն պատճառելու և իր արքայական  
քմահաճոյքները կատարելու համար։ Բայց երե-  
խան հօ մեղաւար չէր, որ ծնուած օրից նրան  
այդ էին ներշնչել, և սրա համար էլ Տարւինը  
չէր հակածառում նրան։

Նրանք մեծ ճանապարհով գնալիս, յանկարծ  
իրենց առաջ նկատեցին մի փոշու ամպ, որը  
քանի գնում մօտենում էր ու փերջապէս կարե-  
լի էր պարզ տեսնել իրենց դէմ եկող մի կառք,  
որ հին, ջարդուած կարետի էր նմանում։

— Այս ինչ բան է, փոքրիկ, հարցրեց Տար-  
ւինը։

— Ես հենց սրա համար էլ այստեղ եմ  
եկել, ասաց կենւարը։ Այդ «այն կինն» է գա-  
լիս, որը պէտք է առողջացնի ինձ։ Հայրս նրա  
համար կառք է ուղարկել, Դուք հօ զիտէք, որ  
ես տկար եմ։ մանգալ չեմ կարողանում ու  
շուտ շուտ էլ ուզբից գնում եմ։ Ախ, ինչքան  
վատ է, երբ մարդ հիւրանդ է։

Տարւինը տանջւում էր այդ երեխային նա-  
4

յելուց և սարսափով մտածում, որ այդ հիւանդ երեխային մի քանի տարուց յետոյ պէտք է յանձնեն այսպիսի մի ծանր ու լուրջ գործ, ինչպիսին երկիր կառավարեն է:

— Մինչև հիմա ձեզ ով էր բժշկում, հարցրեց Տարւինը:

— Ո՞վ էր բժշկում: Ոչ ոք: Բայց հիմա «այն կինջը» ուղարկել են մեզ մօտ և նա կը բժշկի ինձ:

— Ո՞վ է «այն կինը», հարցրեց Տարւինը:

— Նրա անունը ես չը գիտեմ: Նրան այստեղ են ուղարկել, որ այստեղի հիւանդանոցում բժշկի հիւանդներին: Ինձ էլ նա պէտք է բժշկի:

Տարւինը կանգնեց կառքի մէջ ու սկսեց լարուած հայեացքով նայել մօտեցող կառքին: «Այն կինը», անցաւ Տարւինի մտք ով, որ պէտք է ծառայի տեղական հիւանդանոցում... էլ ով կարող է լինել նա, եթէ ոչ կետը:

Տարւինի սիրտը սկսեց բարախել:

Երեխան իր պահակին ձեռքով նշան արաւ, և պահակը երկու մասի բաժանուելով բռնեց ճանապարհի երկու կողմը՝ եկող կառքը գիմաւորելու համար: Կառքը կանգնեց ու նրա միջից գուրս եկաւ ջարդուած, փոշոտ, երկար ճանապարհից յոգնած ու անքնութիւնից կարմրած աչքերով կետը: Նրա յոգնած ոտքերը կը ծալուէին նրա տակ, եթէ Տարւինը արագութեամբ գուրս չը թռչէր կառքից ու բռնէր նրան: — Կետ, բացականչեց նա:

— Այդ դուք էք, Նիկ, դուք... յուզուած արտասանեց կետը:

VI

Տարւինը խնդրեց քահանայի կնոջը ինա մել կետին, որը այնպէս մէն-մէնակ էր այդ օտար երկրում: Բարի կինը ուրախութեամբ ընդունեց նրա խնդիրը և առաջարկեց կետին իրենց տանը ապրելու:

Նա կետին առաջնորդեց նրա համար պատրաստած սենեակը, որպէսզի նա կարգի բերէր իր հագուստներն ու հանգստանար ճանապարհորդութիւնից յետոյ:

Երբ կետը մնաց մենակ, նստեց սեղանի առաջ, զլուխն առաւ ձեռքերի մէջ ու խորա-սուզուեց մտքերի մէջ: Դեռ չէր կարողանում սթափուել իրեն պատած այն զարմանքից, որը պատճառել էր իր հանդիպումը Նիկի հետ, որին ինքը մտքովն անգամ չէր անցկացրել այստեղ հանդիպելու:

Այս անսպասելիութիւնը ակամայ ուրախացրեց նրան, ուրախացրեց, կարելի է ասել, աւելի շատ, քան ինքն էր ուզում ցոյց տալ:

Բայց և միւս կողմից, նա ամօթ էր համարում իր համար:

Կետի համար շատ ծանր էր տանից հեռաւ Ամենավերջին ըոպէին քիչ էր մնում կողնէր իր վճռականութիւնը:

Բայց նա շոգենաւ մտնելիս մտածեց, որ  
յաղթել է բոլոր արգելքներն ու խոչնդուները:  
Վերջապէս ինքն ազատ է: Ոչ ոք նրան կանգ-  
նեցնել չի կարող: Ոչ ոք չի կարող նրան յետ  
պահել այն կեանքից, որին նույիրել է նա ինքն  
իրան: Մի քանի օր էլ—և նա իր աչքով կը  
տեսնի այն բոլոր տանջանքները, որոնց համար  
անցել է ահազին ովկիանոսը:

Նա իր երևակայութեան մէջ տեսնում էր  
այն կանանց, որոնք աղաջանքով դէպի ինքն էին  
մեկնում ձեռքները, հաւատով պատմում նրան  
իրենց ցաւերը. Նա լսում էր ամբոխի հեծկը-  
տանքը, որը կանչում էր իրեն: Նրա հոգին ձգտում  
էր դէպի այն տանջուածները, որոնց համար  
ինքը եկել էր, ասես թէ կեանքը բաժանուել է  
նրանից ու նա թուել է ովկիանոսի միւս կողմը  
այդ տանջուածների մօտ ու նույիրուել նրանց:

Երբ նա ափ գուրս եկաւ, մի ըոպէ սար-  
սափը տիրեց նրան, թէ արդեօք ընդունակ է  
նա այդ գործը կատարելու համար: Բայց նա  
շուտով հանգստացաւ: Նա իր գործը կանի այն-  
քան լաւ, որքան Աստուած նրան ոյժ կը տայ.  
ու նա առաջ գնաց, համակուած այս նոր զգաց-  
մունքով:

Այսպիսի զգացմունքով եկաւ նա Ռատոր, և  
յանկարծ Նիկին պատահեց այստեղ: Կետը Նի-  
կից շատ շնորհակալ էր, որ նա անցել էր Երկ-  
րազնդի կէսը, որպէս զի իր մօտ լինի ու  
պահանի իրեն. բայց թէ իրա համար անհա-

մեմատ լաւ կը լինէր, եթէ նա չը գար: Նիկի  
ներկայութիւնը այժմ կանգնում էր իր ու այն  
բոլոր իղձերի միջն, որով նա ուզում էր օգտա-  
կար լինել ուրիշներին:

Այդ բոպէին ոչ թէ սէրը, այլ բոլորովին  
մի այլ բան նրան անհրաժեշտ թուաց կեանքի  
մէջ: Միւս օրուանից կետը մի կեանք էր  
սկսելու, որը պէտք է շրջապատողների բարե-  
կեցութեանը ծառայէր, մինչդեռ նրա մտքերը  
շարունակ դառնում են դէպի նիկորայ Տարւինը:  
Կետը գիտէր, որ անհնարին կը լինի այն  
մեծ ձեռնարկութեան իրազործումը, եթէ ինքը  
բոլոր ժամանակ կը մտածի նրա վրայ:

Երկու Աստծու ծառայելով աշխարհքին տի-  
րել չի կարելի: Իրեն ոգեորող նպատակին հաս-  
նելու համար նա պէտք է ամբողջովին նուիրուի  
զրան: Նա չի կարող մինչև անգամ իր մի մասը  
Նիկին յատկացնել: Իսկ նա որքան բարի է,  
որ վեր է կացել եկել: Կետը գիտէր, որ Նիկը  
եսասիրական նպատակով չէ այդ արել. գիտէր,  
որ նա իսկապէս գիշերները չէր կարող քներ  
երբ մտածէր այն բոլոր վտանգների մասին,  
որոնց ենթարկուել էր ինքը: Նիկի վարմունքը  
ակամայ շարժում էր կետի սիրալ:

Այդ օրը տիկին էստեսը Տարւինին իր մօտ  
ճաշի հրաւիրեց: Ճաշից յետոյ կետը պատշամ-  
քում Տարւինի հետ մենակ մնաց ու ասաց  
նրան, նայելով նրա աչքերի մէջ.

— Նիկ, եթէ ես ձեզանից մի բան խնդրեմ,  
կը կատարէք:

— Արդեօք կայ մի բան, որ ես ձեզ համար  
չանեմ, ասաց Տարւինը լուրջ կերպով:

— Գնացէք այստեղից. ես ուզում եմ անել  
այն, ինչի համար եկել եմ, բայց չեմ կարող,  
քանի դուք այստեղ էք:

— Յամենայն դէպս ես չեմ գնալ, հաստատ  
պատասխանեց Տարւինը. միթէ չը դիմէք, ինչ-  
պիսի տեղ էք եկել:

— Այստեղ այդքան վատ տեղ է որ, հար-  
ցրեց կետը:

— Վատ է, բացականչեց նա. աւելի վատ,  
քան դուք կարող էք երևակայել:

Եւ նա սկսեց պատմել կետին Ռատորի  
պատմութիւնը, նրա քաղաքական ու հասարա-  
կական կեանքը:

— Ինձ համար զգուելի է, երբ տեսնում եմ  
այս հարուստ ու բազմամարդ երկրի անկենառու-  
նակութիւնը: Սա շատ հարուստ երկիր է ու  
բաւականաչափ միջոցներ ունեն սրա բնակիչ-  
ները. բայց կուլտուրական ձեռնարկութիւններ  
նախաձեռնելու բոլորովին անընդունակ են:  
Մարգիկ այստեղ կատարեալ մումիաներ են,  
փայտէ խրձիկներ:

— Այն, այն, արտասանեց կետը, ասես թէ  
ինքն իրեն, և նրա աչքերը փայլեցին. հենց  
դրա համար էլ եկել եմ ես:

— Ինչպէս թէ:

— Նրա համար, որ նրանք նման չեն մեզ:  
եթէ նրանք խելօք և կրթուած լինէին, մենք  
ինչ կարող էինք անել նրանց համար: Մենք  
նրանց հարկաւոր ենք հենց նրա համար, որ  
նրանք զարգացած չեն, թոյլ են ու անկարող:

Տարւինը չը հակածառեց նրան ու մի քանի  
ըոպէից յետոյ կետին մնաս բարև ասելով հե-  
ռացաւ: Բայց կետը հասկացաւ, որ նա հաս-  
տատ վճռել էր մնալ ու եթէ ինքը չէր ուզում  
այստեղից գնալ, ուրեմն մնում էր հաշտուել  
Տարւինի մնալու հետ: Նրանից յետոյ կետը  
համարեա թէ այլ ևս չէր պատահում Տարւինին:  
Տիկին կստեսը կետին պալատ տարաւ և այն,  
ինչ որ նա այնտեղ տհսաւ՝ գրաւեց իր ուշըն  
ու միտքը:

Մի տարօրինակ զգացմունք պատեց կետին,  
երբ նա մտաւ այնտեղ, ուր մշտական աղջա-  
մուղջ էր—այդ միջանցքների, սանդուղների ու  
գաղտնանցքների լաբիւրինթոսում, որոնցով շա-  
րունակ անցուդարձ էին անում ծածկոցներում  
փաթաթուած կանայք ու զարմանքով և երեխա-  
յական հետաքրքրութեամբ դիտում իր շորերը,  
գլխարկն ու ձեռնոցները:

Կետին թւում էր, թէ ինքը երբէք չի կա-  
րողանալու ընտելանալ այդ շինութեանը: Իսկ  
կանայք տանում էին նրան սենեակների երկար  
շարքերով, որոնք իջնում էին 8 սաժէն խորու-  
թեամբ ժայռի մէջ փորած ներքնատները:

Ամեն քայլափոխում նա հանդիպում էր

կանանց ու երեխաների: Ինչպէս ասում էին, այդ պալատում 4000 կենդանի մարդ էր ապրում, իսկ թէ որքան մեռածներ կային—ոչ ոք չը գիտէր այդ:

Մի քանի կանայք հրաժարուեցին կետին մատուցանելիք ծառայութիւնից, որովհետև սպիտակ կնոջ իրենց զիպչելը նրանք սրբազնութիւն էին համարում: Կանանցից ոմանք էլ իրենց երեխաներին էին բերում նրա մօտ, որպէսզի նա խաւարում ծնուած իրենց այդ դալուկ մանուկներին կարմրութիւն և ոյժ տայ: Աղջիկները, տենդոտ հայեացքով, բոլոր անկիւններից գէպի նա էին նետում ու թափանձանքով հետևում նրան, որոնց կետը չէր հասկանում ու վախենում էլ էր հասկանալ:

Պատրաստուող կերակուրների բոյրն ու շոգին, ծխախոտի թեթև ծուխն ու կենդանի մարդկանց առանձնայատուկ հոտը իրար խառնուելով՝ խեղիչ ազգեցութիւն էին թողնում կետի վրայ: Բայց ինչ որ նա լսում ու կռահում էր՝ նրան աւելի էր սարսափեցնում, քան այն բոլոր սոսկումները, որ նրա աչքի առաջն էին գալիս:

Երբ տիկին էստեսը կետին պալատ բերաւ, այդ միջոցին Տարւինը ուաջայի հետ բակումն էր: Նրան թողնում էին թագաւորական այգիներում ազատ զբունելու. նրան ուրախութեամբ թողնում էին և ախոռները, ուր կապած էին 800 ձիեր. նա առանց արգելքի շըջում էր պա-

լատի բոլոր դրսի բակերը: Բայց կետը կարող էր մտնել և այստեղ, որտեղ Տարւինի համար մուտքը արգելուած էր, հետեաբար և նրան հսկելու հնարաւորութիւնից զուրկ:

Երբ կետը ծածկուեց գոան վարագոյրի ետևում, որը գէպի պալատի կանանց սենեակներն էր տանում, նա զգաց, որ իր ձեռքը ակամայ գէպի ատրճանակն է գնում:

Նա այդպիսի անհանգիստ դրութեան մէջ էր կետի համար, քանի դեռ կետը ծածկուած էր այն խորհրդաւոր սենեակներում, որտեղից բացի անվերջ շըուկից ու շրիկոցից, ոչ մի ձայն չէր հասնում արտաքին աշխարհը:

Երբ կետը գուրս եկաւ այստեղից կենւարի ձեռքից բռնած, սաստիկ գունատ էր ու վախեցած. նրա աչքերում արհամարհանք էր փայլում: Նա տեսել էր ուաջայի պալատի բոլոր սարսափները:

Նա այնպէս էր վրդովուած, որ մինչև անգամ Տարւինին չը նկատեց ու շտապում էր տուն:

Հենց նոյն երեկոյեան Տարւինի հիւրանոցը եկաւ կենւարը:

— Այ, ես կետի համար եմ բերել այս, ասաց երեխան, զգուշութեամբ գուրս գալով կառքից մի կապոցով, որը բռնել էր երկու ձեռքով. եկ գնանք նրա մօտ:

Տարւինը անմիջապէս ցած իջաւ:

— Այդ ինչ էք տանում նրա համար, հարցրեց Տարւինը:

— իմ մօր կողմից եմ տանում այս, թագուհու կողմից — իսկական թագուհու: Նա մինչև անգամ ինձ ասաց, որ նրան մի բան էլ ասեմ, որը ձեզ չեմ կարող ասել:

Կետը վերնասըահումի էր, երբ նըանք եկան.  
նըա դէմքը մի քիչ բացուեց երեխային տես-  
նելուն պէս:

— Իմ թիկնապահներին հրամայեցէք այդին  
չը մտնել, ասաց փոքրիկ ուաջան, թող նրանք  
ճամբին սպասեն: Այս ձեզ համար է իմ մօր  
կողմից, շարունակեց նա, փաթեթը կետին մեկ-  
նելով: Դուք նրան տեսել էք: Նա յանձնարա-  
րեց ինձ ձեզ ասելու հետեւալը. «Ուղարկում  
եմ ձեզ այս ձեռագործը, որովհետեւ տեսայ  
ձեր չքնաղ դէմքը: Ի սէր աստուածների, լաւ  
պահպանեցէք այդ, որպէս զի չար հանձարը չը  
խորտակի այն, ինչ որ ես արել եմ, որովհետեւ  
սրա մէջն է իմ կեանքն ու հոգին: Պահպանե-  
ցէք իմ ձեռագործը, որը ես ձեզ եմ ուղարկում—  
այս շորը, որը իննը տարի ոստայնի վրայ է եղել»:

Կետը բաց արաւ կապոցը ու միջից հանեց  
կոպիտ գործած սևախառն դեղին գոյնի մի  
հաստ բլուզ։ Նա տարակուսանքով նայում էր  
այդ խղճուկ նոռէրին։

—Ասացէք, որ շատ շնորհակալ եմ, ասաց  
կեալ:

— Սրա պատասխանը այդպէս չը պէտք է

լինի, ասաց երեխան ու աղեքսական հայեացքով  
նայեց Տարւինին:

Տայուց օրու կ ըստ պատմածութել,  
Տարւինը յիշեց այն բոլոր պատմածութել,  
թէ ինչպէս Սիթաբդայլ ուզում է պատուել  
Կենւարից։

Նա մօտեցաւ կետին ու արագ շշուշաց.

—Միթէ գլուխ չէք ընկնում. իսնը տարի  
ոստայնի վրայ եղած շորը նրա իննը տարեկան  
տղան է:

— կաւ, ես ի՞նչ կարող եմ ասով, ու քով ասաց կետը:

— Հսկելու պահպանել սրան։ Վագուհին  
Սիթաբգայը չը զրկի նրան կեանքից։ Թագուհին  
մայրը չի համարձակուել պարզ ասել ձեզ իր  
խնդիրը ու հիմա իր որդու հսկողութիւնը ձեզ  
է յանձնում այս պարգևի միջոցով։  
Ու ալյատում ամեն

Կետը հասկացաւ։ Այդ պալատում  
ինչ հնարաւոր էր, մինչև անգամ երեխայի  
սպանութիւնը։ Կենար ուշան անշարժ կանգ-  
նած էր մարզող օրուայ աղջամուղջում, որի շո-  
րերի վրայ փայլվելում էին ալմաստները։

— Նորից կը կնքեմ, սալցրած  
— Զէ, չէ, հոգեակս, չէ, բացականչեց կետը,  
չոքելով ու քնքշանքով կը ծքին սեղմելով նրան:  
Նիկ, ի՞նչ անել այս սարսափելի աշխար-  
օհ, Նիկ, ի՞նչ անել այս սարսափելի:

— ԱՌ, բացականչեց երեխան, իսկ ու  
յել են անմիջապէս հեռանալ, երբ տեսնեմ, որ  
դուք լաց էք վիսում։ Նա կանչեց զիսուորմերին

ու թողնելով յատակին ընկած այն խղճուկ  
բլուզը, կառք նստեց ու հեռացաւ:

VII

Հետևեալ օրը Տարւինը զարթնելով՝ սկսեց  
մտածել, որ մինչև հիմա դեռ ոչինչ չի արել  
իր հայրենի Տոպագ քաղաքի համար: Նա չը  
գիտէր, թէ ուր է նառվեական և հաւատացած  
էլ չէր, թէ այդպիսի բան կայ, թէ չէ: Որոշեց  
լուրջ կերպով գործի կենալ:

Բացի գրանից, Ամեթ գետում աշխատանք-  
ները սկսելու ժամանակն էր, որովհետև Անդ-  
լիայի ներկայացուցիչը արդէն հարցուփորձ  
էր արել, թէ նա ինչ հիման վրայ է ապրում  
Ռատորում:

Տարւինը ձին նստեց ու ճանապարհ ընկաւ  
դէպի քաղաք, որպէս զի ուաջային ցոյց տայ իր  
յարգանքը: Նա ուաջային գտաւ դուրսը կանդ-  
նած, ուր նրա ձիապահները անց էին կացնում  
նրա առաջով թամբած ձիերի շարանը, որպէս  
զի նորին մեծութիւնը բարեհաճի նրանցից մէկն ընտրել իր զբոսանքի համար: Տարւինը կանգ  
առաւ այդտեղ:

—Ահ, դուք այստեղ էք, ասաց ուաջան,  
նկատելով նրան: Ուզում էք գնանք զբոսնելու:  
—Ինչու չէ, եթէ այդ հաճելի է ձեզ:  
Ռաջան հրաման տուաւ, ու ձիապահները  
վագեցին ձիերը թամբելու:

Մինչդեռ նրանք սպասում էին ձիերին՝ Կեն-  
ւարը սանդուղքներով ցած թուաւ ու վազեց հօր  
մօտ: Հայրը գրկեց նրան ու սկսեց ընքութեամբ  
փաղաքշել ու հարցնել, թէ ինչու եկաւ այդտեղ:  
—Ես եկայ նայելու իմ թիկնապահներին:  
Հայրիկ, ինձ վատ թամբեր են տուել իմ գնդի  
համար:

—Հիմա ի՞նչ ես ուզում:  
Երեխան աղերսական ձեռվ ձեռքերը կը ծ-  
քին գրաւ ու յետոյ համարձակ բռնեց հօր  
ահազին մօրուքի ծայրից:

—Ես ոչինչ չեմ ուզում, միայն թող տասը  
նոր թամբ տան ինձ, ասաց կենւարը: Ներքնաւ-  
տանը թամբեր կան, բայց ախոռապեան ասում  
տանը թամբեր կան, բայց ախոռապեան ասում  
գաւորից:

Ռաջայի դէմքը մռայլեց և նա բարկացած  
բացականչեց.

—Ի՞նչ իրաւունք ունի ախոռապեաը քեզ  
չը տալու այն, ինչ որ դու ուզես, արքայակն:  
—Ես նրան սոյն իսկ ասացի, որ հայրս կը  
նեղանայ, ասաց կենւարը:

—Դու կարող ես գնալ վերցնել թամբերը,  
իսկ ախոռապեաը կը պատժուի, որ չի հպատակ-  
ուում քեզ, արքայազն:

Տարւինը դիտում էր այդ տեսարանը և ակա-  
մայ վրդովում էր նրան այն դաստիարակութիւնը,  
որ տալիս էին ուաջայ կենւարին: Նրան բացար-  
ու տալիս էին ուաջայ կենւարին: Նրան բացա-  
ձակապէս ոչ մի բան չէին մերժում: Նրա բո-

լոր ցանկութիւնները բողէապէս պէտք է կատարուէին. իսկ այն յանցաւորները, որոնք չէին հպատակւում նրան, խիստ պատիժների էին են. թարկւում: Էլ ինչ կայ զարմանալու, եթէ մի օր այդ սիրելի ու դուրեկան երեխան մեծանալով մի ահարկու ու խստասիրտ միապետ դառնայ:

Զընայած սրան, այնուամենայնիւ կենւարի կեանքը պալատումը ոչ մի բողէ ապահով չէր: Եւ հենց այդ բողէին էլ Տարւինը նկատեց, որ նրա երեալուն պէս՝ պալատը շրջապատող չորս շէնքերն էլ կենդանութիւն առան ու պահապանները արթնացան: Նա լում էր զսպուած շնչառութիւն, գգում մուսկուսի ծանր բոյրը և խորհրդաւոր ու զայրագին շշնջիւն:

Նա գլխի ընկաւ, որ Սիթաբգայան ու իր կանայք պալատում ամեն մի անցուդարձի հետևում են: Եւ Տարւինը վշտացաւ այդ սիրելի մանկան համար, որը ապրում էր այդպիսի խորհրդաւոր պայմաններում, ուր շարունակ գաւաղըութիւններ էին սարքում, ուր ոչ մէկը չէր կարող իր կեանքը ապահով համարել:

Եւ ով կարող էր պաշտպանել երեխայի կեանքը այդ պալատում, ուր իշխում էր Սիթաբգայան, և որի մուտքը արգելուած էր եւրոպացիների համար: Ճիշտ է, կետը կարողացաւ մուտք գործել այնտեղ ու թագուհի-մայրը խընդիրեց նրան, որ իր մանկանը պաշտպանի այն գնչունուց. բայց կետն ինչ կարող էր անել: Երկուսով էլ մինչեւ անգամ—ինքն ու Տարւինը—չէին

կարող կռուել այն աներևոյթ և հզօր Սիթաբգայի դէմ: Նրանք իրենց միջամտութեամբը այն մանկան համար, իրենց դէմ կը դարձնէին Սիթաբգայի զայրոյթը, և դա վտանգաւոր էր նրանց համար:

Այս բոլորը անհանգստացնում էին Տարւինին, իսկ արքայազնն ու արքան ոչինչ չէին նկատում: —Այսօր դուք ինչ էք մտադիր անել, հարցրեց Տարւինը երեխային:

—Ես կը գնամ թամքերը վերցնելու, ասաց կենւարի, և ապա կը գամ այստեղ խաղալու առաջին մինհստրի որդու հետ:

Փեղկերի ետևում խշխոցը աւելի ուժեղացաւ, որը, ասես թէ, թագնուած օձի սուլոց լիցաւ, Տարւինին թուաց, թէ հենց այսօր է կենացնէր: Տարւինին թուաց, թէ հենց այսօր է կենացնէրի պալատում մնալը վտանգաւոր, երբ ինքը ուաշան որսի կը գնան ու երեխան միանգան ուաշան որսի կը գնան ու երեխան միանգան տակ: Մայն կը մնայ Սիթաբգայի իշխանութեան տակ:

—Այսօր դուք կետին կը պատահէք, հարցրեց նա երեխային:

—Զէ, ես այստեղ կը մնամ խաղալու:

—Իսկ դուք դեռ չը գիտէք, թէ նա ձեզ համար ինչ խաղ է պատրաստել:

—Ի՞նչ խաղ:

—Գնացէք նրա մօտը ու կը տեսնէք: Տարւինը գրպանից մի կտոր թուղթ հանեց ու գրեց կետին. «Այսօր ձեզ մօտ պահեցէք երեխային, որպինեակ ես այստեղ շատ կասկածեախային, որպինեակ ես այստեղ շատ հաճելի նշաններ տեսայ: Որևէ զբաղմունք հատ-

ըեցէք նրա համար, խաղեր սարքեցէք և աշխատեցէք նրան պալատ չը թողնել»:

Նա իր մօտ կանչեց կենւարին ու նամակը  
տալով նրան, ասադ.

- Կետին տուէք այս: Քանի դեռ մենք այս-  
տեղ ենք, դուք խսկոյն ճամբալ ընկէք:

Երեխան լսեց նրան ու հրամայեց իր կառքը  
Ճել:

Հենց այդ ժամանակ ձիապահները մօտ քաշեցին մի բարձր ու կրակոտ նժոյգ Տարւինի ու մի նիհար մատակ ռաջացի համար:

— Նա ձեզ վայր կը քցի, վրդովուած բացա-  
կանչեց կենւարը, արդէն իր կառքում նստած.  
Նա բոլոր ձիապահներին վայր է քցում:

Այդ ըսպէիս, տիրող լուռթեան մէջ լսուեց փեղկին զարկուող երեք հարուած:

Զիապահներից մէկը արագ անցաւ նժոյզի  
միւս կողմը. Տարւինը ուար դրաւ ասպանդակին,  
որ ցատկի, բայց այդ բոսէին թամբը շրջուեց,  
ձիու սանձը պահողը բաց թողեց ձին ու Տարւինը  
հազիւ կարողացաւ ուն ասպանդակից  
ազատել. ձին առաջ ոլացաւ: Եթէ Տարւինը  
փոքր ինչ դանդաղ շարժուէր՝ անպատճառ ջարդ  
ու փշուր եղած կը լինէր:

Տարւինը հասկացաւ, որ այս բոլորը դիտմամբ է սարքած. որ Սիթաբզայան արդէն սկսել է վրէժինդիք լինել իրեն՝ մանկանը հոգ տանելու պատճառով։ Բայց նա միանգամայն հանգիստ մնաց։

— Ես մարդ սպանելու աւելի խորաման կ  
յձեւեր եմ տեսել, ասաց նա: Յետոյ հրամայեց  
ետ բերել ձին, փորկապը ամուր քաշեց ու  
ցատկեց մէջը: Նժոյզը ծառս եղաւ ու ամեն  
կերպ աշխատեց վայր քցել նրան և կատաղած  
դուրս թռաւ դարպասից ու առաջ պացաւ:

Տարւինը պինդ նստած էր թամբին։ Եա  
հիանալի ձի հեծող էր ու շուտով հանդարտա-  
ցրեց կատաղի ծիռն։ Ուաշան մնացել էր հիացած  
նրա շնորհքից։

—Հրաշալի՞ է, գերազանց է, բացականչուս  
էր նա:

Զբոսանքի ժամանակ նըանք կրակում էին  
հրացաններից։ Տարւինը թագաւորին հարցրեց,  
թէ արդեօք տեսնէլ է նա ինչպէս են ատրճանա-  
կով խփում նետուած զրամին։ Ռաջայի քնուտ  
աչքերը փայլեցին մանկական ուրախութեամբ։  
Նա այդպիսի բան տեսած չէր։ Տարւինը դրամը  
վեր նետեց ու յետեկից կրակեց ատրճանակից։  
Կրամը վայր ընկաւ ճիշտ մէջտեղից զարկուած։  
Ռաջան աւելի զարմացած Տարւինի հմտութեան  
վրայ՝ բացականչեց։

— Աստուած վկայ, կեամբըւսն առաջ շեմ տեսել. ես պատրաստ եմ ձեր ամեն մի խնդիրը կատարելու:

— Շատ լաւ, ծիծաղնլով առաջ  
ես ձեզանից մի բան եմ խնդրում:

— Ի՞նչ է  
— Ուզում եմ նառլեական տեսնել։ Ես տե-  
5

սել եմ ձեր թագաւորական բոլոր թանգարժէք իրերը, բացի նրանից:

Ուայսան լուռ անցաւ մի քանի սաժէն:

— Պարոն Տարւին, դուք գիտէք, որ մեր  
թագաւորութեան ամենաարժէքաւոր գոհարն է  
այն, ասաց նա վերջապէս, որը ինձ մօտ չէ  
պահւում և նոյնիսկ չը գիտեմ, թէ ուր է պա-  
հուած այժմ։ Մի սրբազան իր է այն և ես չեմ  
կարող թոյլ տալ, որ դուք տեսնէք։

Տարւինը տիրեց։ Ի՞նչ ասել կուզի, որ այդ  
խորամանկ հնդիկը շատ լաւ գիտէր նառլեալայի  
տեղը, բայց չէր ուզում ասել։

VIII

Տարւինի՝ ոաջայի հետ զբօսանքի եղած միջոցին կետն էլ ա. էստեսի հետ էր դուրս եկել տանից:

Կետի գրած նպատակը այժմ՝ չէր կարող  
սահմանափակուել միայն պալատի պատերի ներ-  
սը տառապողների վիճակի թեթևացումով։ Եւ  
եթէ արքայական գահի շուրջը այդքան դժբաղդ-  
ներ կային, հապա ի՞նչ պէտք է քաշելիս լինէր  
ֆնացած ժողովուրդը։ Կետն այդ առաւօտ գնա-  
ցել էր հիւանդանոցը դիտելու:

Գլխաւոր փողոցի վրայ մի սպիտակ տան  
ճակատին փայլում էր «Պետական հիւանդանոց»  
գրութեամբ ցուցանակ։ Դռների առաջ խմբուած  
էր ամբոխը։ Համարեա թէ ամեն մի կնոջ գըր-  
կում երեխայ կար, և քանի Կետի կառքը մօտե-

Նում էր, աղիողորմ ձայների աղաղակը աւելի էր լսում է:

կանայք համարեա քաշքում էին սրան.  
ամեն մէկը աշխատում էր իր երեխան սրան  
մեկնելու: Նա մանուկներից մէկին առաւ ու  
սեղմեց իր կրծքին. երեխան ամբողջովին այլ-  
ուում էր տեսնդի մէջ:

Այդ միջոցին հիւանդանոցից դուրս եկաւ  
մի բարձրահասակ հնդիկ եւրոպական տարազով  
և աջ ու ձախ հրելով հաւաքուած կահանց, մօ-  
տեղաւ կետին ու խոնարհ գլուխ տուաւ:

— Նոր բժիշկը դժւք էք, հարցրեց սա, առաջ մեցէք, հիւանդանոցը պատրաստ է. բայց թոյլ տուէք նախ ներկայանալ ձեզ. ևս Դունպատ Քայն եմ, այս երկրացի ու այս հիւանդանոցի

ՔԺԵՐԱԿԸ:  
Ամբոխը յետ քաշուեց ու կետը նրա հետ  
միասին բարձրացաւ սանդուղքներով։ Նրանք  
լուսած մտան հիւանդանոցը, ուր օրիորդը ստի-  
պուած էր հաւաքել իր փեշերը, որպէսզի չը  
պուած էր հաւաքել իր փեշերը, որպէսզի չը

Վեց հատ կոպիտ շինուած, թովարով գաղ կպուած ու կաշուով պատած մահճականեր էին շարուած տան ցեխոս բակում, ու նրանցից իւրաքանչիւրի վրայ սաւանում փաթաթուած մի մարդ էր պառկած. նրանք բոլորն էլ գալարւում էին, հառաջում ու զառանցում:

Հիւանդներին մօտեցաւ մի կին կճուճը ձեռքին և իգուր աշխատում էր հարկադրել նրանց,

որ ուտեն նըա միջի հոտած կերակուրը: Վառ  
արկի տակ համարեա մերկ կանգնել էր մի մարդ,  
որն աշխատում էր անթարթ նայել արկին:

Յետոյ նա ինչոր բան երգեց ու սկսեց  
վագել բակում:

— Նա բոլորովին խելագար է, ասաց բժիշկը:  
Նրան չի կարելի բժշկել, բայց ինքն էլ այս-  
տեղից հեռանալ չի ուզում:

— Կանանց բաժանմունքը ցոյց տուէք ինձ,  
ասաց կետը:

— Կանանց համար մենք առանձին բաժան-  
մունք չունենք. նրանց աեղաւորում ենք որ-  
տեղ պատահում է, թէ վերև, թէ ներքև, ասաց  
բժիշկը:

— Իսկ ճնշդարանները մրտեղ են, հարցրեց  
կետը:

— Հենց որտեղ լինում է տեղաւորում ենք:  
— Ո՞վ է հսկում նրանց:

— Նրանք ինձ չեն սիրում. բայց դրսից մի  
շատ հմուտ կին այցելում է նրանց:

— Իսկ այդ կինը որևէ տեղ սովորել է:  
— Ոչ, բայց մեծ յարգանք ունի իրենց  
գիւղումը:

Սարսափը հետզետէ տիրում էր կետին:  
Եւ իսկապէս սարսափելի էր, երբ հիւանդանո-  
ցում բժիշկների փոխարէն պարզապէս գործում  
էին հասարակ հէքիմներ:

Կետը պահանջեց, որ բժիշկն անմիջապէս  
իրեն տանի ճնշդարանների մօտ. նա էլ շտապ

ցոյց տուաւ կետին նեղ սանդուղքով տանող  
ճամբան:

Կետը անհամբերութեամբ բաց արաւ դուռը  
ու մտաւ մի կիսամութ սենեակ: Բոլոր պատու-  
հաններն ու անցքերը, որոնցով կարող էր թարմ  
օդ ներս հոսել՝ խնամքով փակած էին. մի ան-  
կիւնում կրակ էր վառւում ու կետը հենց ա-  
ռաջին ըոսէին քիչ էր միում խեղղուէր ծխից:

Նրանց խնամող կինը կեղտոտ ու մազերը  
զզզզուած մի պառաւ էր, որը հենց այդտեղ էլ  
կը համար կերակուր էր պատրաստում. նրա  
հասցըրած օգնութիւնը կայանում էր զլխաւորա-  
պէս նրանում, որ աղօթում էր երկու կաւէ  
կուռքերի առաջ ու ծաղիկներով զարդարում  
նրանց:

Անհնար է որևէ կերպ նկարագրել այն զըժ-  
քաղդների տանջանքները, ինչ որ կետը տեսաւ  
այդ սենեակում:

Ոչոք չիմացաւ, թէ ինչ պատահեց կետի  
ու այն հէքիմ կնոջ միջն, միայն թէ վերջինս  
գուրս եկաւ հիւանդների սենեակից ու կատա-  
գած հեռացաւ այլս չը վերադառնալու որո-  
շումով:

Դըանից յետոյ կետն էլ ոչ մի բանից չէր  
զարմանում: Դեղերը շատ անփոյթ էին պատ-  
քարմանում, սենեակները կեղտոտ էին, մութն  
ըաստում, սենեակների կեղտոտ էին, տալիս  
ու հեղձուկ: Հիւանդներին թոյլ էին տալիս  
կ հեղձուկ: Հիւանդներին թոյլ էլ ուզենան  
իրենց ծանօթներին ընդունել երբ էլ ուզենան  
կ ամեն տեսակ իրեր վերցնել նրանցից:

Եթէ որևէ մէկը մեռնում էր, լալկանները  
ոռնալով՝ մերկացը ած ննջեցեալին շրջում էին  
ամբողջ քաղաքով՝ տարածելով ամեն տեսակ  
վարակիչ հիւանդութիւններ։ Վարակիչ հիւան-  
դութեամբ բռնուածներին առանձնացնելու մա-  
սին չէին էլ մատածում ու աչքացաւոտ երեխա-  
ները անհոգ խաղում էին այցելուների երեխանե-  
րի հետ ու քութէշաւորների մահճակաների մօռտ

Ամբողջը նայելուց յետոյ, կետը բժիշկ  
Դունկատ Բային յայտնեց, որ այդ օրուանից  
միայն ինքն է լինելու հիւանդանոցի գլխաւորը  
և որ իր հրամաններին անխտիր պէտք է հպա-  
տակուեն բոլորը:

Բժիշկը ի միջի այլոց յայտնեց, որ ինքն է բժշկում պալատական կանանց, և ապա իրեն փոքր ինչ արդարացնելու համար ասաց, թէ հիւանդանոցն այնքան քիչ փող է ստանում, որ նրանով անհնար է անհրաժեշտ գեղորացք ձեռք բերելու:

— Սրա արժէքը ես եմ վճարում, ասաց  
կետը, անհրաժեշտ գեղերի ցուցակը ցոյց տա-  
լով նրան, և ես կը վճարեմ այն ամենի համար,  
ինչ որ ինքս անհրաժեշտ կը համարեմ:

Խորամանկ հսդիկը աչքի անցրեց կազմած ցուցակը, հաշուեց դեղերի գինը ու մատածեց, որ եթէ այդ աղջիկը յաճախ կազմի նման ցուցակ-ներ, ինքը կարող է լաւ օգուտ ունենալ դրա մէջ, որպիհետև հաշիւները ինքը պէտք է ներ-կայացնի։ Առա համար էլ նա պատրաստ էր

այդ օրիորդի բոլոր ասածները կատարելու։  
Երեք ժամից յետոյ կետը դուրս եկաւ հի-  
ւանդանոցից՝ յոգնածութիւնից, քաղցից ու դր-  
խացաւից բոլորովին ուժասպառ։

Այնուհետև կետը ամեն օր հիւանդանոց էր գնում, առաւօտից մինչև երեկոյ աշխատում այս- տեղ և պէտք է ասել՝ նրան յաջողուեց բաւա- կանին բարեփոխել հիւանդանոցը՝ կարգ ու կա- նոն մտգնելով այստեղ:

Բոլոր սենեակները կարգին մաքրում էին,  
իսկ հիւանդների հետ շատ քաղցր էին վարում։  
Ամեն մի հիւանդի առողջանալու լուրը ամբողջ  
շրջանում արագօրէն տարածում էր և այդ «Սպի-  
տակ կախարդունու»—այդպէս էին անուանում  
կետին—հզորութիւնը հռչակում ու նորոնոր  
հիւանդներ գրաւում դէպի հիւանդանոց։

Նրանք կետի արած բարիքը հասկանալ, սրա  
ինքնազոհութիւնը գնահատել չէին կարող, բայց  
ամենօրն էլ օրհնում էին նրան:

Նա մինչև անգամ կարողացաւ ազդել և  
Դունպատ Բայի վրայ։ Սա յանձն առաւ կրա-  
ներկ անել պատերը, ախտահանել հիւանդանոցի  
բաժանմունքները, քամահարել սպիտակեղէնը ու  
մինչև անգամ այրել այն անկողինները, որոնց  
մէջ ծաղկով հիւանդներ են եղել պառկած, մի-  
առ առաջ չէր անւում։

բաս, որ առաջ էր  
թէև կետը գիտէր, որ ինքը դեռ անելու  
շատ բան ունի, բայց և այնպէս ուրախ էր իր  
յաջողութիւնով, և նոյնիսկ մի անգամ Տարփ-  
յաջողութիւնով,

նին ցոյց տուեց հիւանդանոցը, որի առթիւ այս-  
քան շատ վիճում էր նա իր հետ:

Տարւինը հիւանդանոցում տեսած փոփոխու-  
թիւնից մնաց ապշած և գովեց կետին:

—Այնպէս լաւ ու մաքուր է արուած ամեն  
ինչ, ասաց Տարւինը, որ կարելի է ասել՝ դու  
հրաշք ես գործել այստեղ:

Տարւինը նոյնիսկ զգում էր, որ կետն այդ-  
տեղ անհամեմատ շատ բան էր արել, քան ինքը:  
Նա դեռ ոչ մի բայլ չէր մօտեցել իր նպատա-  
կին, մինչդեռ այդ մատաղ ու թոյլ աղջիկը կա-  
րողացել էր այնքան շատ բան անել այն դժ-  
բաղդների համար, որոնց նա նուիրել էր իր  
կեանքը:

Վերջին օրերը Տարւինը ընդհանրապէս  
ոչինչ չէր անում. նա որոշեց գետում կատա-  
րելիք աշխատանքները շուտով սկսել: Նա ու-  
ղերուեց դէպի պալատ: Բարեբաղդաբար ուաշան  
այդ օրը շատ տխուր էր ու զուարձանալու ան-  
զուսպ պահանջ էր զգում: Նա հրամայեց Տար-  
ւինի տրամադրութեան տակ դնել այնքան մարդ,  
որքան նրան պէտք կը լինի:

Եւ ահա Տարւինը սկսեց գետի ուսումնասի-  
րութիւնն ու պատուարի կառուցումը: Այդպիսի  
բան այդ թագաւորութեան սկզբնաւորութիւնից  
սկսած ոչ ոք չէր տեսած: Նա փոշու ամբողջ  
ամպեր էր բարձրացնում: Բոլոր բանտերը բաց-  
ւեցին ու յանցագործներին արձակեցին: Տարւի-  
նը տանում էր ոտքերը շղթայակապ այդ մարդ-

կանց քաղաքից հինգ վերստ գուրս, որպէսզի  
պատուարեն Ամեթը:

Տարւինը այդպիսի գործերում հմուտ էր  
ու շատ արագ էր կազմում գործելու ծրագիրը:  
Նա վճռեց պատուարը այնպէս կանգնեցնել, որ  
գետը փոխի իր հունը: Այդպիսով գետի յատա-  
կը մի քանի վերստ երկարութեամբ կը բացուէր  
կը մի վիայի վերստ հաւաքելը: Տարւինը  
ու հեշտ կը լինէր ոսկին հաւաքելը: Տարւինը  
վախենում էր միայն, որ ուաշան որեէ քմահա-  
ճոյքով կարող էր դադարեցնել աշխատանքը: Նա  
ամեն միջոց գործ էր դնում, որ այդ աշխա-  
տանքը հետաքրքրական դարձնի այդ բթամիտ  
արքային, և երբ նա եկաւ՝ ամենատպաւորեցու-  
ցիչ պայմաններ անել տուաւ: Նրա աշխատան-  
քը իզուր չէր անցնում և ուաշան ամեն առաւօտ  
քը իզուր չէր անցնում այդ տեսարանը, որ այնքան  
գալիս էր նայելու այդ տեսարանը, որ այնքան  
գրաւում էր նրան:

Բանուորների աշխատանքը, քարերի անընդ-  
հատ պայմանները, ընդհանուր աղմուկն ու  
իրարանցումը—այս ամենը զուարձացնում էին  
թագաւորին և նու ուրախութեամբ վճարում էր  
այդ բոլորի համար:

Ամբողջ օրը այդ աշխատանքի ետևից լինե-  
լով Տարւինը չէր կարող իրեն անգործ համա-  
րել. բայց միւս կողմից նա շարունակ անհան-  
գստանում էր, որ նաուկեակայի մասին ոչինչ  
չի կարողանում իմանալ:

Երբեմն նա սկսում էր կասկածել նրա գո-  
յութեան մասին, թէև շարունակ ամենուրեք

լսում էր այդ գանձի մասին։ Միայն թէ մէկը  
չը կար, որ կարողանար նրա տեղը ասել։

Գործակատարները հիւրանոցում ասել էին  
նառականակայի մասին, Դունպատ Ռայն էլ յայտ-  
նել էր, որ ինքը տեսել է այն ներկայ թագա-  
ւորի թագագրութեան ժամանակ։ Ռաջայ կեն-  
ւարը քանի քանի անգամ ասել էր, թէ երբ  
ինքը գահ բարձրանայ՝ պէտք է նառական  
շարունակ կրի իր վզին։ Ուրեմն նա գոյութիւն-  
ունի։ Բայց երբ Տարւինը հարցըց կենւարին,  
թէ ուր է նառական, երեխան պատասխանեց,  
— Զը գիտեմ։

## IX

Իր նպատակին հասնելու համար Տարւինը  
շուտ շուտ պալատ էր գնում. ուաջայի հետ պո-  
զիչ էր խաղում, նրա հետ ձիով զրօսանքի գը-  
նում, և չը նայած ուաջայի դէպի ինքը ունեցած  
լաւ վերաբերմունքին, այնուամենայնիւ ոչինչ  
չէր կարողանում իմանալ այն հրաշալի մանեա-  
կի մասին։

Ամեն անգամ պալատ գալիս սովորաբար  
նա ուաջային տեսնում էր բակում, Սիթաբգայի  
պալատի առաջ իր շներով, թութակներով զուար-  
ճանալիս, լորերի կոռով կամ զինուորների շո-  
րեր հագած կապիկների քայլուածքով հրճուե-  
լիս։ Եւ Տարւինը ստիպուած էր հիանալու այդ  
երեխայական խաղերով, թէ նրա ամբողջ ուշքն

ու միաքը զբաղուած էր մանեակով։ Բացի այդ՝  
նա հսկում էր կենւարին, որ մի վտանգ չը պա-  
տահի նրան։ Միւս կողմից նա և կետին էր  
հսկում ու հետու պահում վտանգից, որին նա  
կարող էր ենթարկուել պալատում, ուր յաճախ  
լինում էր։

Կետը շուտով ծանօթացաւ պալատի բոլոր  
ել ու մուտքին։ Նա իմացաւ, որ ամբողջ պալա-  
տը Սիթաբգայան է կառավարում։

Մի անգամ կետը տեսաւ թագուհուն՝ պառ-  
կած բարձերի կոյտի վրայ. նա մի մատաղահաս  
կած բարձերի կոյտի վրայ. նա մի մատաղահաս  
կին էր՝ մանկական դէմքով, քնքոյշ ձայնով ու  
կին աշերով։ Կետը վրդովուեց ամբողջ էու-  
սե աշերով։ Կետը վրդովուեց ամբողջ այդ  
թեամբ՝ փարթամութեան մէջ խեղուող այդ  
կառավարում էր կառավարում էր կառավարում էր աշխա-  
կնոջը տեսնելով. նա գիտէր, որ դա է աշխա-

տում կարձել կենւարի կեանքը։  
Թագուհին ուզեց սիրաշահել կետին, բայց  
սա զզուանքով յետ քաշուեց նրանից ու հեռա-  
սա պալատի այդ մասից։ Երբ կետը դուրս ե-  
ցաւ պալատի այդ մի մերկ տղայի, որ ուրախ-  
կաւ, պատահեց մի մերկ տղայի, որ ուրախ-  
կաւ, թափահարում էր ձեռքի գանակը ու  
ցատկուում գլխատուած այծի չորս կողմը,  
որից արիւնը գեռ ծորում էր։ Դա այն գնչու-  
հու որդին էր։

Կետը սոսկաց այդ տեսարանից ու այնու-  
առ խուսափում էր այդտեղով անցնելուց։ Նա  
հետեւ խուսափում էր այդտեղով անցնելուց։ Նա  
գերազասում էր յաճախել պալատի այն մասը,  
գերազասում էր սաջայի թողած կինը, կեն-  
ւարի ամյրը։

Սիթաբգյան մայր-թագուհուց յափշտակել  
էր Նրա բոլոր իրաւունքները: Նրա բնակարանում  
շատ դատարկ սենեակներ կային, ուր առաջ  
Նրա սպասաւորներն էին ապրում: Ինքը թա-  
գուհի մայրը ոչ ջահէլ էր և ոչ էլ գեղեցիկ: Նրա  
աշքերը մարել էին յաճախակի արցունքներից.  
Նա սաստիկ անհանգստանում էր իր որդու համար:  
Կետը շարունակ աշխատում էր նրանից իմանալ,  
թէ ինչ վտանգ է սպառնում կենւարին, իսկ  
թագուհին սովորաբար պատասխանում էր.

— Ես ոչինչ չը գիտեմ։ Այս վարագոյրների  
ետևում ոչ ոք ոչինչ չը գիտէ։ Միայն թէ ես  
ձեզ խնդրում եմ նայէք իմ որդուն։ Ինքս չեմ  
կարող հսկել նրան, քանի որ այս սենեակներից  
դուրս գալ չեմ կարող։ Ես միայն խնդրում եմ,  
որ բարի լինէք դեպի իմ որդին։ Ել ոչինչ առել  
չեմ կարող։

— Բայց, որպէսզի կարողանամ պաշտպանել կենւարին, հարկաւոր է, որ ես բոլորը գիտենամ, իսկ դուք ինձ ոչինչ չէք պարզում:

— Ես ինքս էլ խարխափում եմ խաւարի  
մէջ, իսկ խաւարը լիքն է վտանգներով:

Այսպիսով կետը թագուհուց ոչինչ չը կարողացաւ իմանալ: Նա այս մասին խորհուրդ հարցըց Տարւինից, թէ ի՞նչպէս անի, որ կարողանայ վտանգը հեռացնել կենւարից. իսկ Տարւինը խորհուրդ տուաւ նրան, որքան կարելի է կենւարին հեռու պահել Սիթաբդայի ապարանքից: Սակայն այդ էլ չափազանց գժուար էր:

Բանն այն է, որ թագաւորը խստիւ հրամայել էր որդուն կատարել կետի բոլոր հրամանները, որովհետև նա էլ նկատել էր երեխայի առողջութեան մէջ փոփոխութիւն դէպի լաւը և գիտէր, որ դրա համար նա միայն կետին է պարտական:

Փոքրիկ արքայազնը, որին մինչև այդ ոչ  
ոք ոչ մի հրաման չէր տուած, այժմ աշխա-  
տում էր կետի հրամանները կատարելուց խոյս  
տալ: Որովհետև կետը նրան արգելում էր գնալ  
պալատի այն մասը, ուր Սիթաբզայան էր ապ-  
րում, նա, ընդհակառակը, ամեն տեսակ խորա-  
մանկութիւն էր բանեցնում այդ մասն ընկնելու:  
Եւս սա հասկանալի էր: Պալատի այն մա-  
սում, ուր նրա մայրն էր՝ նա միայն արցունք  
էր տեսնում: Իսկ Սիթաբզայի սենեակնելում  
նրան ամենքն էլ շողոքորթում էին:

Այստեղ կային լաւ երգչումիներ, որոսք  
նրա համար երգում էին. կային կապիկներ, սի-  
րամարգեր, ձեռնածուներ ու լարախաղներ: Նը-  
րան թոյլ էին տալիս ատրճանակով ու ոսկեկոթ  
դաշըջններով խաղալու. իսկ ամենից շատ նրան  
դուր էր գալիս այծի զոհաբերութեան ծէսը,  
որին ներկայ լինելու թոյլ էին տալիս նրան:

Նրան գուր էր գալիս այդ առաջակա Արանք և համար նախանձում էր Սիթաբդայի փոքրանք և նու նախանձում էր Արանք և համար նախանձում էր Սիթաբդայի փոքրիկ տղային, Ումբ-Սինգին, որը ինքն էր մորթում այծը ու յետոյ պարում նրա շուրջը լճացած արեան մէջ:

Եթէ կենւարին այդ ապարանքում որևէ  
վտանգ սպասելիս էլ չը լինէր, դարձեալ կետը  
կաշխատէր չը թողնել նրան այդտեղ, որովհետև  
այդ տեսարանը անբարոյականացնում էր նրա  
հոգին ու նրան խստամիրտ դարձնում:

Կետը Տարւինի օգնութեանը դիմեց և երե-  
խան շուտով նրա ազդեցութեանը ենթարկուեց:  
Վերջինս նրա համար որևէ զբաղմունք էր հնա-  
րում, որպէսզի դրանով նրան հեռու պահի Սի-  
թաբայի ապարանքից: Երեխան երբեմն փախ-  
չում էր նրանից, իսկ Տարւինը նրան գտնում  
էր և հեռուից հսկում, որ վտանգ չը պատահի:  
Տարւինը տեսնում էր, որ այդպիսով Սիթաբա-  
յի զայրոյթն էր լարում իր դէմ: Մի անգամ,  
երբ նա հեռանում էր պալատից, նորոգուող դար-  
պասի վերկից ցած ընկաւ վեց արշինանոց մի  
գերան ուղիղ Տարւինի ձիու ոտքերի առաջ:

Զին յետ թուաւ դէպի բակը, և Տարւինը  
փակ փեղկերի ետևում լսեց կանանց շշուկ: Սի-  
թաբայան սկսել էր հետամտել վրէժխնդիր լի-  
նելու:

Նա հայնոյեց տախտակակապի ետևում  
թագնուած բանուորներին ու ձին առաջ քշեց:  
Նա տեսնում էր, որ պատուարներ շինող իր  
բանուորներն էլ սկսել էին տարօրինակ պահել  
իրանց: Նրանք կամուրջները այնպէս էին շի-  
նում, որ Տարւինի ձիու ոտքը արանքներումը  
մնայ, մի անգամ էլ երբ նա հարցըրեց գետով  
անցնելու անվտանգ տեղը, նրանք ցոյց տուին

այնախիսի աեղ, ուր ձին մինչև փորը թաղուեց  
աւազի մէջ և նա հազիւ մահից ազատուեց: Այս  
բոլորի մէջ Տարւինը այն գնչուհու մատն էր  
տեսնում:

Ուրեմն այսպիսի հանգամանքում կետն էլ  
վտանգից ազատ չէր, որովհետև գնչուհին նրա  
վրայ էլ պէտք է կատաղէր: Այս ամենը Տարւի-  
նին մտատանջութեան մէջ էր զցում: Բայց ի՞նչ-  
պէս համոզէր կետին: Միւս կողմից էլ նա պէտք  
է նառուեական ձեռք զցէր:

Այն, գեռ անելու շատ գործ ունէր Տարւինը:

## X

Տարւինը վաղուց էր հաշտուել այդ սոսկա-  
լի երկրի սովորոյթների հետ, մի բան, որ առաջ  
զարմանալի էր թւում: Բայց և այնպէս նա չա-  
փականց զարմացաւ, երբ մի անգամ ուածան  
յայտնեց նրան, թէ ինըը մտադիր է փոքրիկ  
կենւարին ամուսնացնել երեք տարեկան  
ուածայ կետին: Նման բան Տարւինը իր կեան-  
մի աղջկայ հետ: Նման բան Տարւինը իր կեան-  
մի քում լսած չէր: Նա գնաց կետին ասելու այդ  
անհեթեթութիւնը, որից վերջինս այնպէս վըր-  
անդութիւնը, որ Տարւինն ստիպուած էր նրան հան-  
դովուեց, որ Տարւինն ստիպուած էր նրան հան-

գստացնել:

— Զեղ մի տանջէք, կետ. դուք այդպիսով  
կարող էք ձեր ջղերը քայլայել:

— Օ՛, ոչ, ես ուժեղ եմ և շատ բաներ կա-

ըող եմ տանել: Բայց մի մտածեցէք է այդ հարսանիքի մասին:

—Այն, կենւարին, հաւանօքէն, կը հարկաւորուի ձեր օգնութիւնը հարսանիքից յետոյ։ Ռաջան ասաց, որ երեխան երեք օր ու զիշեր պէտք է անքուն մնայ, որպէսզի իրանց քահանաները նրա համար աղօթքներ կարդան և այդպիսով հարսանիքին պատրաստեն նրան։

—Այդպիսով կարող են երեխային սպանել:  
Անշուշտ Սիթաբգայան սարքած կը լինի այդ  
բոլորը:

Եւ ճիշտ որ դրանից յետոյ սկսուեց կեն-  
ւարի հարսանիքի նախալաւրաստութիւնը: Քա-  
ղաքի պարսպից դուրս վրանների մի նոր քա-  
ղաք էր փռուել, որովհետև կենւարի հարսանի-  
քին բազմաթիւ հիւրեր պէտք է հաւաքուեին  
Ծատոր, որոնք պիտի գային իրենց հետեակ ու  
ձիւաւոր շքախմբով:

Ամբողջ քաղաքը զարդարուած էր. բոլոր  
տները նորից ներկել էին. գիշերները փողոցնե-  
րում խարոյիներ էին վառւում. Կետը և Տարփ-  
նը որքան աշխատում էին կենւարին տեսնել,  
չէր յաջողւում. Դրանց միշտ պատասխանում  
էին, որ կենւարը քահանաների մօտ է,

Հարսանիքի համար նրա նախապատրաստուելը  
ամբողջ շաբաթ տևեց: Շաբաթուայ վերջը հար-  
սանիք եկան և անգլիական պաշտօնեաներ—նա-  
հանգապետի ներկայացուցիչները: Տարւինը մնա-  
ցել էր զարմացած, թէ ինչպէս էր անգլիական

կառավարութիւնը թոյլ տուել այդ երկու երեսի խաների անմիտ պատկրութիւնը, որն ինքը կատարեալ ոճրագործութիւն էր համարում։ Բայց յետոյ իմացաւ, որ նահանգապետի պաշտօնեան ռաջային համոզելիս է եղել՝ որդուն 20 տարեկանից վաղ չամուսնացնել, իսկ ռաջան պատասխանել է, թէ իր նախնիների աւանդական սովորութիւնն է այդ, յետոյ էլ մի առատաձեռն նուիրաբերութիւն է անում անգիտական մի բարեգործական ընկերութեան և դրանով մեղմում պաշտօնեային, որից յետոյ վերջինս էլ չի ընդունի այստիկ վրդովեցին Տարգիմանում։ Այս բոլորը սաստիկ վրդովեցին Տարգիմանին:

Վերջապէս հասաւ հարսանիքը օրը։ Տված  
կաստանում հարսնացուն պսակի ժամանակ  
դուրս չի գալիս և պսակի հետևեալ օրը նրան  
նորից իր հայրենիքն են տանում։

Տարւինը ուղեսորուեց դէպի տաճար։ Յա  
հազիւ կարողացաւ խռնուած ամբոխը ճեղքելով  
համել մինչև տաճարի մուտքը և այստեղից դի-  
տել ներսը։

Նա միայն ուզում էր իր աչքսրով առանել,  
Նա կոհիսան ողջ ու առնդջ է:

թէ արդեօք երբանա ու կիսախաւարում երկում էին բազմաթե, ամենի վեցում աս-

բազմագլուխ ու սուր-սուր ատամեթրով առաջածների առաջածների անդրիները։ Լսում էր տիսուր երգեցողութիւնը ու բուրգառներից ծուխու զեր էր սարձրանում։ Յետոյ խաւարից դուրս եկաւ կենաւարը և կանգնեց ջահերով լուսաւորուած 6

բեմի վրայ։ Գոհարազարդ ու զմբուխտապատ չալմայի տակից երևում էր նրա դիակի պէս գունատ դէմքը։ Երեխային տեսնելուն պէս Տարւինը տանջանքից կծկուեց։ Քիչ յետոյ նրա շնչառութիւնը կտրուեց և ամեն բան մոռացած՝ շոած աշքերով նայում էր կենւար ռաջայի կը քից կախուած նառւեակային։

Այն, այն էր, այն հրաշալի մանեակը, որ տարածուած երեխայի կը ծքին՝ իր փայլով աղօտացնում էր երկնքի աստղերը։ Նա վառվում էր սուդակէ, զմբուխտէ ու գոհարէ բազմապիսի քարերով։

Բայց այս բոլորը միայն մի բոպէ տեսեց։ Գրանից յետոյ անմիջապէս ռաջան յետ գնաց, ծածկուեց խաւարում ու տաճարի դռները փակուեցին։

Յամենայն դէպս Տարւինը տեսաւ այն. ուրեմն հեքիաթ չէր ինչ որ պատմում էին այդ մանեակի մասին, այլ նա իսկապէս զոյութիւն ունէր։ Հիմա նա անպատճառ ձեռք կը բերի այն և նրանով կը զարդարուի տիկին Մետրը, իսկ «Երեք ընկերակցութիւն»-ը Տոպազով կանցկացնի երկաթուղու գիծը և ինքը իրանց քաղաքի փըրկարարը կը դառնայ։

## XI

Հետեւալ օրը Տարւինը ամեն կերպ աշխատում էր տեսնել կենւարին և հարցնել նառւ-

լեակայի մասին։ Բայց՝ երեխան գնացել էր հարսին իր հայրենիք ճանապարհ ձգելու։ Տարւինը մի քանի օր իզուր սպասում էր կենւարին։

Մի անգամ, երբ Տարւինը գործի վրայ էր, պատուարներ էր շինել տալիս՝ կետից մի նամակ ստացաւ, որով վերջինս նրան խնդրում էր շուտափոյթ գալ իր մօտ։

Երբ որ Տարւինը եկաւ, կետը նրան հանդիպեց սաստիկ վրդովուած դէմքով։

— Այդ ի՞նչ է, ի՞նչ է պատահել, բացականչեց նա։

Կետը նրան պատմեց, որ այդ օրը առաւտեան կենւարը՝ պահապաններով շրջապատուած կառքով եկաւ իր մօտ, համարեա դիակնացած։

Կետն այդ հիւանդութիւնը վերագրում էր հարսանիքի հանդէսի ժամանակ նրա կրած չափազանց յոգնածութեանը, Երեխայի շրթունքները կապտած են եղել և անվերջ ջղածգութիւններ է եղել անելիս։

Կետը յիշեց, որ իր մօտ կանեփուկով մի քանի թունաւորուածներ կային, որոնք նոյն քանի թունաւորուածներ կենւարը. և նա կասնացներն ունեին, ինչ որ կենւարը. և նա կածում էր, թէ արդեօք թունաւորուած չէ երեխան։

Նրանք վճռեցին, որ կենւարը անկասկած թունաւորուած է և անշուշտ Սիթաբգայի գործն

է այդ: Որոշեցին, որ Տարւինը գնայ ուաջայի մօտ և ամեն բան պատմի:

Տարւինն իսկոյն ձի հեծաւ և ուղևրուեց պալատ:

— Ես պէտք է տեսնեմ ուաջային, ասաց նա դռնապանին:

Դռնապանը յայտնեց, որ ամբողջ օրը ուաջային տեսնել չի կարելի:

Տարւինը որոշեց բակում սպասել, մինչե որ ուաջան կը բարեհաճէր դուրս գալ: Նա նոյն իսկ դիտմամբ ձին շուաքը չէր քաշում, թէս արել անխնայ այրում էր, որպէսզի ուաջան տեսնէր ու հասկանար, թէ նրքան անհրաժեշտ է նրան ընդունելը:

Մի քանի ըսպէից յետոյ կանաչ փեղկերի ետկից խշխոց լսուեց: Տարւինն զգում էր, որ հարիւրաւոր աչքեր են զիտում իրեն, որոնց ինքը չէր կարողանում տեսնել:

Վերջապէս փոքրիկ դուռը բացուեց ու երեաց ուաջան: Մի ճխլուած խալաթ հազած, չալման մի կողմ թեքուած, աչքերը կարմրած, նա անհաստատ քայլում էր դէպի Տարւինը:

Երեսում էր, որ նա արբած էր:

— Վաղուց էք սպասում ինձ, հարցըք նա: Ինձ չեն յայտնել, որ դուք այստեղ էք:

Ռաջան հենց բակի մէջ նստեց բազկաթոսի վրայ. նա կատկածով նայում էր Տարւինին:

— Ինչու էք անհանդստացնում ինձ. ինչ էք

ուզում. ինչու աշխատանքի վրայ չէք, յանկարծ վրայ տուաւ ուաջան:

— Ես եկել եմ ձեր որդու մասին խօսելու:

— Նրան հօ ոչինչ չէր կարող պատահել:

— Այդպէս էք կարծում:

— Ինչպէս կարող է նրան որևէ վատ բան պատահել: Զէոր դուք ինքներդ խոստացաք նրա հաւատարիմ բարեկամը լինել: Ուրեմն ես էլ ինչու անհանգիստ լինեմ: Արի, լաւն էն է խմենք:

— Նա հրամայեց գինի բերել և միանգամից խմեց այնքան, որ Տարւինը մնաց ապշած: Յետոյ ուաջան առաջարկեց հիւրին, որ նա էլ իր որինակին հետևի: Բայց Տարւինը հրաժարուեց դրանից:

— Շնորհակալ եմ, կարուկ պատասխանեց նա, ես խմելու համար չեմ եկել: Ես եկել եմ յայտնելու, որ ուաջայ կենւարը սաստիկ հիւանդ է:

— Այո, զիտեմ, նա թեթև տեսդ ունի:

— Ոչ թէ տեսնդ ունի, այլ նա թունաւորուած է և քիչ էր մնում մեռնէր:

— Ուրեմն անգլիական գեղերիցն է այդ, սաց ուաջան, ապուշ ապուշ ժապաւով:

— Ես ձեզ ասում եմ, որ երեխան թունաւորուած է, այն էլ այստեղ, պալատումը: Այս գործում խառն է այն կինը, որ ապրում է այստեղ:

— Ռաջայի դէմքը սաստիկ գունատուեց և նա կատաղաբար բացականչեց.

— Ինչպէս էք համարձակւում խօսել իմ հա-

ըեմի մասին. Ես եմ արդեօք թագաւորը, թէ  
մի ուրիշը՝ կորէք, քանի դեռ պահպաններս  
չեն վոնդել ձեզ:

— Ես յանձն եմ առել հսկել ու պահպանել  
ուղայ կենարին և պէտք է պահպանեմ նրան,  
ասաց Տարւինը: Իսկ գուք ուզում էք, որ ձեր  
կանայք սպանեն նրան:

— Բայց եթէ թունաւորում էլ լինի, այդ  
դեռ ես ապացոյց չէ, որ հարեմի կանանցից է  
թունաւորողը: Պարոն Տարւին, անգլիացիք ին-  
ձանից ամեն ինչ լսեցին, բայց այստեղ—նա  
ցոյց տուաւ Սիթարգայի ապարանքը—անօրէնը  
ես եմ: Եւ ես մտադիր չեմ ձեզ ասելու, թէ  
ինչ է կատարւում այն վարագոյրի ետևում:

— Չեմ էլ խնդրում, որ ասէք. ես միայն  
ուզում եմ նախազգուշացնել Սիթարգայից: Ար-  
քայազնին նա է թունաւորել:

Ռաջան գողաց: Մի եւրոպացի համարձակ-  
ւում է նրա թագուհու անունը տալ և այնպիսի  
մեղաղրանք բարդել—սա, ինքն ըստ ինքեան  
վիրաւորական և չը տեսնուած մի բան էր: Այդ  
ըստէին ուաջան նոյն իսկ պատրաստ էր յարձա-  
կուել Տարւինի վրայ:

— Եթէ գուք չէք ուզում ինձ լսել, ես կը  
գնամ գնդապետ նոլանի մօա: Ես այնքան ապա-  
ցոյցներ ունեմ, որ նրան կը համոզեն միանդա-  
մայն, խօսեց Տարւինը:

Ռաջան աչքերը չուց ու մնաց յառած Տար-  
ւինի վրայ: Տարւինին թուաց, թէ նա կաթուած

է ստանալու: Ըստ երեսյթին գինին ազդել էր  
նրա վրայ. և նա մնաց բազկաթոսի վրայ ան-  
դպայ նստած:

Տարւինը լուս նայում էր ուաջային, մինչ-  
դեռ փեղկերի ետևի աղմուկը մերթ մեղմանում,  
մերթ ուժեղանում էր: Յետոյ նա ձին հեծաւ և  
ուզենորուեց դէպի հիւրանոց:

## XII

Այդ երեկոյեան Տարւինը հիւրանոցի պատ-  
շումբում նստած գլանակ էր ծխում և մտա-  
ծում: Նա տեսնում էր, որ իր գործերը շատ  
վատ են գնում: Կետը այդտեղից հեռանալ չէր  
ուզում, նաուլեական ձեռք ձգել չէր լինում.  
Արագի այդ Սիթարգայան էլ արդէն լսած կը  
բացի նրա մեղաղրանքը և աւելի զայրացած  
իրա դէմ:

Մինչ նա ընկղմուած էր այդ մտածմունք-  
ների մէջ, յանկարծ նրա առաջ բուսաւ մի մութ  
կերպարանք: Տարւինը վեր թռաւ և ձեռքը տա-  
րաւ ատրճանակին:

— Մի վախենաք, ասաց անծանօթը, ես եմ,  
իւզգութը, ուաջայի պալատական ծառան:

— Արքան է ուղարկել ձեզ իմ ետևից:

— Ոչ, թագուհին:

— Ո՞րը:  
— Մի թագուհի միայն իրաւունք ունի պա-  
լատից դուրս գալու, և այդ գնչուհին է:

— Ի՞նչ է ուզում:

— Նա ինդրեց իր մօտ գալ, եթէ չէք վախենում:

— Ո՞րտեղ է նա:

— Նա ձեզ սպասում է լեռներում, պալատից երեք վերստ հեռաւրութեան վրայ: Ինձ հետ ձի եմ բերել, գնանք:

Տարւինը հանեց ատրճանակը, տնտղեց այնու գրպանը գրեց:

— Լաւ, գնանք, իւգգութ, ասաց նա:

Նրանք ձիերը հեծան ու քշեցին դէպի լեռները: Իւգգութը արագօրէն քշում էր ձին: Ինչպէս երևում էր, նրան հրամայուած էր որքան կարելի է շտապել: Վերջապէս նրանք մտան կիրճը և զառիվայրով բարձրացան դէպի լեռան գագաթին շինուած հին աշտարակը:

— Թագուհին այն աշտարակումն է, ասաց իւգգութը:

Տարւինը ձիուց իջաւ ու ոտքով մօտեցաւ աշտարակին: Այստեղ քարի գլխից մի անձանօթ դէմք երևաց, որը ոտից գլուխ պատած էր դեղին շպարցով:

— Զեր ձին յանձնեցէք իւգգութին, պարոն Տարւին, ասաց անձանօթը, իսկ դուք բարձրացէք ինձ մօտ. շատ ուրախ կը լինեմ ձեզ հետ ձանօթանալ:

Նրանք ձեռք տուին իրար: Յետոյ Սիթաբդայան հանգիստ նստեց քարին ու երեսից բար-

ձրացրեց քողը: Տարւինը առաջին անգամ էր տեսնում նրա գեղեցկութիւնը:

Տարւինն էլ նստեց կողքին:

— Սպիտակները առհասարակ ճշմարտախօս են, ասաց նա. ասացէք, ի՞նչ գիտէք դուք:

— Միթէ դուք կարծում էք, որ ես իմ գաղանիքները կասեմ ձեզ:

— Ո՞չ, ես գիտեմ, որ դուք անչափ խորամանկ ու զգոյշ էք:

— Ի հարկէ, եթէ զգոյշ չը լինէի, կարծում եմ, վաղուց կենդանի չէի լինիւ: Սակայն ձեր որոգայթներից և ոչ մինը չը յաջողուեց:

— Այո, բայց եթէ իմանայիք, թէ որքան ցաւում էի այդ մասին: Առաջին անգամը, երբ թամբը շրջուեց, յետոյ երբ գերանը ընկաւ և ձեր ձին անփասս մնաց: Յետոյ իմ բոլոր հասրըներս պատուարներ շինելիս դարձեալ անյաջող անցան: Բայց միթէ դուք իմանում էիք, որ այդ անողը ես եմ:

— Ի հարկէ: Բայց ինչից դրդուած դուք ուզում էիք ինձ սպանել:

— Նախ որ՝ ես չեմ սիրում, երբ այստեղ սպիտակներ են գալիս: Երկրորդ՝ ուաջան սիրեց ձեզ ու ես վախենում էի, որ նա կարող է լսել ձեր խորհուրդները, մինչդեռ նրա միակ խորհորդատուն միշտ էլ ես եմ եղել: Բացի այդ ես մի որդի ունեմ, և ցանկանում եմ, որ նա թագաւոր կը թում. նա անչափ խելօք է:

Եւ քանի գեռ դուք չէիք եկել, այստեղ  
միակ կարգադրութիւններ անողը ես էի ու ես  
կամաց-կամաց մօտենում էի իմ նպատակին:  
Կենւարը ծնուած օրից հիւանդ է. նա վաղուց  
մեռած կը լինէր, եթէ ձեր հոգացողութիւնը չը  
լինէր, և ես հասած կը լինէի նպատակիս: Դուք  
թագաւորին ինչ-որ բան ասացիք իմ մասին. բա-  
րեբաղդաբար նա այնպիսի դրութեան մէջ էր,  
որ լաւ չը հասկացաւ ձեր ասածները: Բայց այդ  
մասին ուրիշ անդամ:

Ասացէք, պարոն Տարւին, դուք կը գնաք  
գնդապետ Նոլանի մօտ և կը պատմէք նրան  
բոլորը:

— Անպայման, եթէ դուք հանգիստ չը թող-  
նէք ուաջայ կենւարին:

— Գիտէք, պարոն Տարւին, ես շատ տեսակ  
անգլիացիներ եմ տեսել, երբ դեռ հասարակ  
գնչուհի էի և խաղում էի լարի վրայ սպաների  
վրանների առաջ. բայց ես երբէք չեմ տեսել  
այնպիսի մարդ, ինչպիսին դուք էք: Դուք ինձ  
դուր եկաք: Երբեմն ինձ թւում է, թէ ես եր-  
բէք չէի ուզենալ ձեզ մեռած տեսնել. Քանի  
քանի անդամ քիչ է մնացել, որ սիրտս նետեմ  
ձեր ձիու սմբակների տակ:

Նա դրկեց Տարւինին ու սկսեց նայել նրան:  
Տարւինը իր թէր պատեց նրա մէջքով և յան-  
կարծ նրա թափանցիկ շորի խիտ ծալքի միջից  
զգաց Սիթաբդայի քամարի սառնութիւնը՝ ինչ-որ

դուրս ընկած մասով: Դրանք ահագին մեծու-  
թեան թանկագին քարեր էին:

Տարւինը ցնցուեց. նա իսկոյն հասկացաւ,  
որ նրա վրան էր նառութեական: Ուրիշ այլ բան  
լինել չէր կարող:

Ահա թէ որտեղ է պահւում այն գանձը,  
վայրկենապէս անցաւ Տարւինի մտքով. ահա երբ  
է այն ձեռք բերելու ժամանակը:

Տարւինը ցած նայեց ու յանկարծ աչքովն  
ընկաւ նրա կրծքին մի փոքրիկ դանակի կոթ:  
Նա արագութեամբ ոտքի կանգնեց: Սիթաբդա-  
յան աղերսագին մեկնեց ձեռքերը դէպի նա:

— Միթէ դուք չէք տեսնում, որ մենք  
ուսեղծուած ենք իրար համար, ասաց նա: Ու-  
զում էք երկրի կառավարիչ լինել, ուզում էք  
իմ առաջին նախարարը լինել:

— Շատ շնորհակալ եմ ձեր սիրալիր առա-  
ջարկութեան համար, ոչ մինը ընդունել չեմ  
այսկարող, որովհետև շուտով հեռանալու եմ այս-  
տեղից:

— Ուրեմն դուք պէտք է գնաք:  
— Այս, միայն թէ մինչև որ ձեզանից չստա-  
նամ այն, ինչ որ ինձ հարկաւոր է: Եթէ թոյլ  
կը տաք, ես կը վերցնեմ ձեզանից այն, ինչ  
հազցրած է ձեր քամարին:

Նա յետ արաւ արծաթէ գոտին և մեկնեց  
Տարւինին:

— Ոչ, դուք շատ լաւ էք հասկանում, որ  
ինձ այդ չէ պէտք: Տուէք ինձ նառութեական:

- Նառլեակմն:
- Այս, հենց այն:
- Իսկ դուք ինձ կը տա՞ք աղային:
- Ոչ:
- Եւ առաւօտը կը գնաք գնդապետ Նոլանի մօտ:

— Այս:  
— Իսկ եթէ ձեզ տամ մանեակը:  
Այս ժամանակ չեմ գնայ: Շտապ  
որովհետև առաւօտն արդէն մօտ է:

Թագուհին սարսափով նայեց երկնքին, որն  
սկսել էր շառագունել: Ոչ մի բան նրան մահից  
չեր ազատի, եթէ լոյսը վրայ համնէր նրան պա-  
լատի պատերից դուրս: Նա նզովում էր այս  
թուլութիւնը, որ սէր էր ներջնչում նրան դէպի  
Տարւինը, և արգելեց իրեն սպանելու նրան, երբ  
մի քանի ըսպէ առաջ նստած էր նա իր կողքին:  
Հենց սկզբից նա ուզում էր սպանել Տարւինին.  
բայց արդէն ուշ էր:

Սիթաբգայան ձեռքերը տարաւ դէպի մէջ-  
քը և Տարւինը լսեց արձակուող կոճակների չըլխ-  
կոցը, որից յետոյ նաուլեական, ամբողջապէս  
կրակի պէս փայլելով, ընկաւ նրա ոտքերի ա-  
ռաջ՝ Սիթաբգայան առանց նայելու մանեակին  
թեքւեց դէպի ձիերը։ Տարւինը վերցրեց այն,  
դրեց ծոցի գրպանը ու քաշեց ձիու կապը,

Թագուհին, կանգնած իր ձիու մօտ, դանդաղում էր հեծնելու:

— Մնաք բարեւ, պարո՞ն Տարւի՞ն, ասաց նա,  
յիշեցէք գնչուհուն։  
Ոսկեկոթ դանակը թռաւ Տարւի՞նի մօտով,  
նրա ուսից մի վերջոկ հեռու, և խրուեց թամբի  
մէջ։

— Սպանիլ դրան, իւզգութ, գոչեց թագուհին իր ծառային, ցոյց տալով Տարինին։ Սպանիլ դրան։

Տարւինը բռնեց թագուհու ձեռքը:  
—Հանգիստ, աղաւնեակս, հանգստացէք.

թոյլ տուէք նստեցնել ձեզ:  
Նա գրկեց նրան, բարձրացրեց և դրաւ  
թամբին:

— Այժմ, գնաք բարե, ու այս խօսքսրը առ  
մտրակեց նրա ձիուն և ձին սլացաւ կիրճով,  
իւզգութն էլ թռաւ նրա ետևից։ Տարւինը մե-  
նակ մնալով հանեց գրպահից նառլեական, ա-  
ռաւ ձեռքերի մէջ ու հաճոյքով նայում էր։  
Քսանեհինդ քար կար նրա վրայ՝ բոլորն էլ մի-  
նը միւսից լաւ. ամեն մինով մի թագաւորու-  
նը միւսից լաւ. ամեն մինով մի թագաւորու-

Տարւինի ամենալազգաւոր լուսաւ ՏՐ ՀՅ  
Նա հասել էր իր նպատակին: Տռազը փրկուած  
էր:

Նա իսկոյն գնաց հեռազբատում ու առաջ  
և եալ հեռագիրը տուաւ. «Տիկին Մետրին. Մա-  
ստակ ձերն է. պատրաստուեցէք այն ընդունե-  
լու և անցըթէք գիծը Տոպազով: Տարւին»

— Բայց ես առանց ձեզ գնալ չեմ կարող:  
Ես ասում եմ, որ լուրջ վտանգ է սպառնում  
ձեզ: Հօ չէք ուզում կեանքներդ զոհել այս ա-  
րարածների համար:

— Այս անգամ գործն արդէն լուրջ է, կետ,  
ասաց նա:

— Ոչ, Նիկ, ես իմ վճռին չեմ դաւաճանի:  
Բայց միթէ մի նոր բան է պատահել:

— Այս, շատ մեծ բան: Նախ՝ ես պէտք է  
հեռանամ Ռասորից: Զեր դրութիւնն էլ վտան-  
գաւոր է: Ես չեմ կարող ձեզ միայնակ թողնել  
այստեղ:

— Բայց ես ոչնչից չեմ վախենում: Ո՞վ  
պէտք է ինձ վատութիւն անի:

— Սիթաբգայան, մռայլ արտասանեց նա:  
Ես ասում եմ, որ ձեզ վտանգ է սպառնում: Ես  
այդ հաստատ գիտեմ:

— Իսկ ձեզ:

— Ո՞հ, իմ մասին չարժէ խօսել:

— Ուրեմն ձեզ էլ է վտանգ սպառնում, և  
այն էլ գուցէ մեծ վտանգ:

— Բանն այն է, որ Սիթաբգայան հազար ու  
մի հսարքների է դիմում՝ ինձ կեանքից զրկե-  
լու համար:

— Ուրեմն դուք պէտք է հեռանաք իսկոյն  
և եթ:

Տարւինը նայում էր նրա վրայ զարմացած:  
Յետոյ նա շուռ եկաւ ու դուրս գնաց սենեակից:  
Կետը դուրս թռաւ նրա ետևից:

— Բայց դուք հօ գնալու էք, բացականչեց  
նա:

— Ո՞չ, առայժմ ես մնում եմ, ինչ էլ որ  
արժենայ այդ:

Կետը մեկնեց ձեռքը, ասես թէ աշխատե-  
լով, որ բռնի նրան, բայց նա արդէն հեռա-  
ցել էր:

Նա դարձաւ փոքրիկ ուաջայի մօտ, որը գեռ  
պառկած էր քահանայի տանը:

Երբ կետը ներս մտաւ, նա խաղում էր իր  
սիրելի կապկի հետ: Կետը նստեց նրա մահճա-  
ռիլին ու երկար լալիս էր, առանց մի խօսք  
ասելու:

— Ի՞նչ է պատահել, կետ, հարցը եց արբա-  
յագնը: Հաւատացէք, ես այժմ համարեա բոլո-  
րովին առողջ եմ ու ինձ համար լաց լինելու  
կարիք չը կայ:

Կետն աշխատում էր զսպել իր արտասուքը,

որպէսզի երեխան չը վրդովուէր: Այդ միջոցին մի կառք մօտեցաւ, որի մէջ նստած մարդը մի ահազին կողով լի միրգ էր բերում: Նա կողովը ներս բերեց և զրեց կետի ոտների առաջ ու ասաց. «Սո թագուհու ընծան է»: Կենւարը այս լսելուն պէս ուրախութեամբ բացականչեց.

— Կետ, այդ իմ մայրն է ուղարկել ձեզ հա մար: Ի՞նչ հրաշալի մրգեր են, այնպէս չէ:

Երբ կետը զամբիւղը զրեց սեղանին, արքայազնը խնդրեց, որ նարնջից իր համար զովացուցիչ խմիչք պատրաստի: Մինչ կետը բաժակ էր փնտրում, կենւարի կապիկը վերցրեց մի բանան, կճեպը պոկեց ու սկսեց ուտել:

Կապիկը բանանի կէսը կերել էր, երբ կետը եկաւ:

Կետը թեթև խփեց գողին ու կապիկն ընկաւ կողքի վրայ: Օրիորդը կուացաւ, որ բարձրացնի կենդանուն, բայց նա արդէն սատկած էր:

Կետը գունատուեց: Նա մօտեցաւ մրգերով լի. կողովին ու հոտ քաշեց: Պտուղներից ինչ որ սիրտ խառնող, հարբեցնող հոտ էր գալիս. այդ հոտից նա վատ զգաց իրեն: Նա վերցրեց կապիկի կերած բանանի կէսն ու դուրս նետեց պատուհանից: Հենց այդ վայրկեանին ծառից ցած թռաւ թութակը ու բանանի կտորը իր հետ բարձրացրեց վերև: Եւ այս այնքան արագ կատարուեց, որ կետը չը կարողացաւ արգելել թռթակին, որը անշնչացած գետին ընկաւ: Միրգը թռնաւորուած էր:

Օրիորդի դէմքը գալիացաւ, աչքերը լայնացան: Նրա մտքերը գարձան Տարւինի մօտ: Նա ասում էր, թէ վտանգ է սպառնում կետին, իսկ սա ցրեց նրա նախազգացումը: Այժմ ո՞ր կողմից պէտք է սպասել հարուածի. ո՞րտեղ է թագնուած թշնամին:

Կետն իրան անօգնական էր զգում և չէր էլ կարող Տարւինի օգնութեանը զիմել, քանի որ այդ կը նշանակէր զղջալ իր արածը, իսկ նա չէր ուղում այդ:

— Ի՞նչ եղաւ, հարցրեց արքայազնը, ինձ համար խմիչք շինեցի՞ք (երեխան այս բոլոր կատարուածը չէր տեսել):

— Ո՞չ, պտուղները վատ դուրս եկան, դողացող ձայնով ասաց նա:

— Ոհ, կենւար, կենւար, բացականչեց նա և գրկելով երեխային սկսեց արտասուել:

Հետևեալ օրը կետը գնաց հիւանդանոց, Ծածկուած թշնամու երկիւղը սարսափ էր աղդում նրան:

Հիւանդանոցի դռան մօտ նրան մի հնդիկ կին էր սպասում: Կետը բժշկել էր նրա ամուսնուն ինչոր վտանգաւոր հիւանդութիւնից և այն ուղարկեց այդ կինը այնպէս էր նուփրուել կետին, որ ոչ մի վայրկեան չէր հեռանում նրանից և օգնում էր նրան հիւանդներին նայելիս:

Այսօր էլ նա նստած սանդուղքի աստիճանի վրայ սպասում էր կետին: Նրա ետևում էր վրայ սպասում էր կետին: Նրա ետևում էր Դունպատ Բայը, որ պէտք է հիւանդան պէտք էր թունպատը էր Դունպատը, որ պէտք է հիւանդան պէտք էր թունպատը:

ւանդանոցումը լինէր այդ ժամանակ։ Կետը  
նկատեց, որ դուրսը ամբոխ է խմբուած, մինչ-  
դեռ ինքը թոյլ էր տուել այցելուներին գալ  
շաբաթուայ մէջ միայն մի օր, իսկ այդ օրը  
այցելութեան օր չէր։

—Աա ի՞նչ է նշանակում, Գունդատ Բայ,  
հարցրեց Կետը ձիուց իջնելով:

— Պուրսը ամբոխը հաւաքուել է, որովհետեւ  
նրան ինչ-որ սուրբ մարդ է զրգում։ Այստեղ  
մի գնաք։ Բայց կետը մի կողմ հրեց ու գնաց  
դէպի բակը։ Նա տեսաւ, որ հիւանդանոցը զբա-  
նուում է յուզուած ամբոխի ձեռքին, որը ցած  
էր քաշում անկողիններն ու ամանները, լամ-  
պաններն ու սպիտակելիցները, սանդուղքներով վեր  
ու վար վազվագելով՝ նրանք տեղափոխում էին  
հիւանդաններին։ Ամեն մի պատգարակ մի քանի  
մարդով էին տանում, որոնք սպառնալի շար-  
ժումներով դառնում էին դէպի կեռու։

Նա իջաւ բակը:

Բակի մէջ տեղում նստած էր մերկ ու  
մըով պատած կիսախելագար մի գերւիշ, որը  
ինչ-որ երգում էր ու ճօճում երկար ու սրա-  
ծայր փայտը: Երբ կետը մօտեցաւ նրան, նրա  
երդը փոխուեց ինչ-որ զզուելի ու զայրագին  
ձիչի: Կետը դիմեց կանանց, որոնք միշտ սի-  
րում էին նրան. Նրանք շրջապատուած էին  
իրենց ազգականներով:

— Ի՞նչ վատութիւն եմ արել ձեզ, բացրականչեց կետը: Ինչու էք գնում, չէ՞ որ դուք

չեռ հիւանդ էք և կարող էք մեռնել: Խնդրուս  
եմ, հենց ձեր սիրոյն, մի գնաք, մինչև որ բո-  
լորովին առողջացնեմ: Զէ որ ձեզանից շատերը  
հեռու տեղերից են եկել:

— Նա ճիշտ է ասում, նա ճիշտ է ասում,  
լսուեց ամբոխի միջից:

— ի հարկէ ճիշտ եմ ասում։ Ես միշտ ձեր  
լաւն եմ ցանկացել։ Պարզեցէք ինձ ձեր այս  
փախուստի պատճառը։

—Մենք ի՞նչ անենք, բացականչեց մի կանացի ձայն։ մենք մեղաւոր չենք։ Մենք կը մնայինք, բայց գերւիշն ասում է, թէ սպեղանինեցինք, վրայ անէծք է զրած։ Նա ասում է, որ իրենքի վրայ անէծք է զրած։ Նա ասում է, որ այս բոլորը սատանայական է, որ ուզում են մեզ մեր հաւատից հանելու...

—Այս, այս, լսուեց մի ուրիշ ձայն. հապա  
սպեղանսիների վրայի կարմիր նշանները լինչ  
են նշանակում: Նրանք մեզ այլում են, ինչ-  
պէս դժոխքի կրակը: Այդ կարմիր նշանները  
միշտ էլ կը մնան մեր մարմի վրայ: Եւ այն  
երեխանները, որ մենք այստեղ ծնուեմ ենք, նը-  
րանք էլ պոչ ու ականջներ կունենան: Այսպէս  
է ասում այն հէքիմ կինը, որին այստեղից  
գոնդեցիք. այսպէս է ասում և գերւիշը:

— Բայց մի՞թէ երևնից այդ սպազմութեաւ  
որևէ վաստ են տուել ձեզ, ասաց կետը. քանի՛  
անդամ դուք ինքներդ շնորհակալ էք եղել, որ  
իմ այս դեղերը օգնում են ձեզ; իսկ այստեղ

ծնուած ձեր երեխաները ոչնչով չեն տարբերւում միւսներից: Ի՞նչ են հասկանում ձեր աղգականները. դուք նրանց մի լսէք. ասացէք, որ ուզում էք ինձ մօտ մնալ, և ես կառողջացնեմ ձեզ: Ես հենց դրա համար էլ եկել եմ այսաեղ:

— Ի՞նչ էք լուս կանգնել. վերցնենք մեր կանանց ու քոյրերին և տանենք, բացականչեցին ամբոխի միջից մի բանիսը: Մենք չենք ուզում, որ մեր որդիները սատանաների նման լինեն: Յետոյ նրանք դիմեցին դերւիշին, որը ուսքի կանգնելով՝ կետի ճառին պատասխանեց մի երկար հայրոյանքով ու նզովքով: Ժողովուրդն սկսեց քիչ-քիչ հեռանալ՝ հետները տանելով իրենց աղգականներին: Կետը կանչում էր կանանց, աղաչում էր, որ մնան, բայց ամեն ինչ զուր էր: Նրանցից շատերը լալիս էին:

Հիւանդանոցի սենեակները քիչ-քիչ դատարկում էին: Մարդկանց հոսանքը սանդուղքներից փողոցն իջաւ, և կետը տեսնում էր, թէ ինչպէս անխղճօրէն քաշըշում էին այն կանանց, որոնց այնքան հոգատար խնամում էր ինքը:

Կետը նայում էր քարացած հայեացքով: Նրա հիւանդանոցը դատարկ էր:

— Սա շատ վատ եղաւ, խօսում էր Դունապատ Բայը, այնպէս հանդիսաւ, որ ասես թէ այդ բոլորը ամեննեին նրան չէին վերաբերում: Այս բոլորի պատճառը այստեղ թագաւորող կրօնական մոլեսանդութիւնն է: Ես կարծում եմ, որ նրանք այլև չեն վերադառնայ: Սա ինձ հա-

մար, ի հարկէ, միւնոյն է, որովհետեւ ես պետութիւնից ոռնիկ եմ ստանում:

Կետը զարմանքով նայում էր նրան:

— Դուք կարծում էք, թէ նրանք այլև երբէք չեն վերադառնայ, հարցրեց կետը:

— Նրանց ամուսինները երբէք թոյլ չեն տալ: Ամեն բան վերջացած է:

Կետը տեղից վեր կացաւ և Դունապատ Բային մնաս բարեաւ ասելով ուղերուեց տուն:

Տանը նրան սպասում էր թագուհի-մօր ուղարկած մարդը, որը խնդրում էր կետին պալատ բերել կենւար ուաջային:

Մինչև արքայազնի հագնուելլը, տան դռանը մի կառք մօտեցաւ՝ բարձերով լիքը, որի մէջ կետը նստացրեց կենւարին, ինքն էլ մօտը նրաւեց և նրան տարաւ պալատ:

Պալատից վերադառնալիս, կետը խոր մըտքերի մէջ ընկաւ: Հիմա, երբ նա ազատուել էր իր վրայ ծանրացած պարտականութիւնից, նրա մտքերը գարձան Տարւինին սպառնացող վտանգի և մի ժամ առաջ տեղի ունեցած դէպքերի շուրջը. նրա աչքի առաջ պատկերացաւ, թէ շնչպէս իր հիւանդանոցի բոլոր կանայք հեռացան իրանից մէկը միւսի ետևից, ինչպէս նրա ամբողջ գործը քայքայուեց, նրա յոյսերը յօդս ցնդեցին: Նրան թուաց, թէ Տարւինը այդ բոլէին մեռնում է տանջալից մահով, և զգաց, որ այդ բանում մեղաւորը ինքն է:

Այդ միջոցին Տարւինը հիւրանոցում իր սենեակի պատուհանի մօտ նստած մտածում էր, որ իր հայրենի քաղաքի օգտի համար ինքը պէտք է հեռանար, բայց դժբաղդութիւնն այն է, որ կետը չի համաձայնում իր հետ գալ:

Կէսօրուայ շողին տեղի տուեց երեկոյեան զովը. ինչ-որ փաթաթուած կերպարանքներ սկսեցին շարժուել պատերի տակ և հիւրանոցից մի գնդակի տարածութեան վրայ գիրք բռնեցին: Տարւինը տեսնում էր այդ և անհանգստանում. նա գիտէր, որ գրանք Սիթաթգայի մարդիկն են, որոնք ուղարկուած են իրեն հետամտելու: Ոչ մի տեղից օգնութիւն չէր սպասում:

Նա աւելի անհանգստանում էր կետի համար: Նրա մօտ գնալը հիմա անհնար էր. նշանակում է սպանուելու գտանգին ենթարկել իրեն: Բայց անհանգստութիւնը այն աստիճանի նեղում էր նրան, որ նա զնուեց գնալ: Նա արագութեամբ մօտեցաւ ձիուն, որ քիչ առաջ կապել էր տան յետեկի կողմը, բայց խեղճ անասունը մի կողքի վրայ ընկած, վերջին շունչն էր փշում: Հստերկոյթին սպանել էին ձիուն, և որպէսզի վերջ տայ նրա տանջանքներին ատրճանակն արձակեց ուղիղ կենդանու ճակատին: Յետոյ վերադարձաւ հիւրանոց: Ի՞նչպէս անէր, որ ընկնէր քա-

հանայի տունը, մտածում էր նա և յուսահատ նայում դէպի ճամբան:

Քաղաքի պարսպի կողմից թափառական գնչուների մի բանակ երկաց, որը կանգ առաւ ճանապարհի մօտ:

Երկի Սիթաթգայի աղքատ ազգականներն են, մտածեց Տարւինը, և դիրքեր են շինում այստեղ:

Յանկարծ բանակի միջից մի փոշու ամպ բարձրացաւ ու երեաց ռաջաւ կենւարի պահակախումբը, որը սկսեց ցրել ամբոխը և արքայագնի կառքի համար ճանապարհ բանալ: Կառյագնի կառքի համար ճանապարհ բանալ: Նրաքը կանգ առաւ հիւրանոցի դռան առաջ. նրա մէջ նստած էին կենւարն ու վեց տարեկան մի երեխայ:

Տարւինը մօտեցաւ կառքին. նա առաջին անգամն էր տեսնում այդ երեխային:

— Որքայազն, առաց նա, դուք դեռ չպէտք է դուրս գայիք:

— Օ՛, ոչ, ես այժմ բոլորովին առողջ եմ: Սա իմ եղբայր Ումբ-Սինդն է, պալատի միւս մասի պըինցը, որտեղ գնախ ինձ արգելուած է: Սա այս ըսպէխս է մորթել այծն ու ձեռքերը գեռ արիւնոտ են: Նայեցէք:

Ումբ-Սինդը մեկնեց Տարւինին իր թաթը, որը, իրաւ, պատած էր արեան չորացած կառը, իրաւ, պատած էր արեան չորացած կառը, թիներով. պահակախմբի մէջ շշուկ բարձրացաւ, իսկ երեխան կռացաւ դէպի Տարւինն ու շշնջաց. «Սիթաթգայ»:

Տարւինը հասկացաւ, որ դա նրա որդին է  
ու սիրով ուրախութիւնից սկսեց բարախել:  
Նրան թուաց, որ Նախախնամութիւնն է նրան  
անսպասելի օգնութիւն ուղարկել: Նա երեխային  
իր մօտ իբրև պատանդ կը պահի և կարող է ա-  
պահով կերպով կետի մօտ գնալ:

—Բայց ձեզ ով թողեց այստեղ գալու,  
հարցրեց նա:

—Մենք միասին խաղում էինք ու ես նը-  
րան պատմեցի ձեր մասին: Սա ուզեց տեսնել,  
թէ դուք ինչպէս էք ձի հեծնում և ինչպէս էք  
կրակում: Եւ մենք անմիջապէս եկանք, այն-  
պէս որ ոչոք չը տեսաւ մեզ:

—Շատ լաւ, ես ձեզ բոլորը ցոյց կը տամ,  
միայն թէ այստեղ անյարմար է, գնանք տիկին  
կստեսի մօտ:

—Ես չեի ուզենալ այնտեղ գնալ, ասաց  
կենւարը. այսօր այնտեղ էի և կետն ասաց, որ  
ինձ ընդունել չի կարող:

—Միթէ նա հիւանդանոցումը չէ:

—Ոչ, հիւանդանոցը քայլայուեց. բոլոր  
կանայք հեռացան:

—Ինչպէս թէ, ինչո՞ւ համար:

—Դսերի պատճառով: Այսօր կանայք դրա  
մասին էին խօսում:

—Այդ միջոցին Ումր-Սինգը ինչ-որ բան  
շնչաց կենւարի ականջին:

—Նա ուզում է գնալ, ասաց կենւարը:

Տարւինը առաւ պահակներից մէկի ձին,

հեծաւ, իր առջեր նստեցրեց Ումր-Սինգին ու  
նրանք բոլորը միասին առաջ շարժուեցին:

Երևակայում եմ, թէ որքան կը վախենայ  
Սիթաբգայան, մտածեց Տարւինը, եթէ իմանայ,  
թէ ուր է գտնում իր որդին: Երբ նրանք մո-  
տեցան գնչուների բանակին, վերջիններս պառ-  
կեցին աւազի վրայ ու գոչում էին կենւարն  
անցնելիս.

«Ողջոյն անապատի արքային»:

—Ախ, ափսոս որ մօտս փող չը կայ, որ  
նրանց բաժանեմ, ասաց երեխան: Դուք չունէք,  
ապարոն Տարւին:

Տարւինն այնպէս ուրախ էր կետի մօտ  
առանց վտանգի հասնելու համար, որ պատ-  
րաստ էր իր բոլոր ունեցածը նրանց նետել: Եւ  
իրտւ, նա մի քանի բուռ արծաթէ ու պղնձէ  
դրամներ նետեց նրանց, որից աղմուկ ու ծի-  
ծաղ բարձրացաւ. բայց գնչուները ինչ-որ բան  
էին գոռում, որը Տարւինը չէր հասկանում, և որի  
վրայ սաստիկ զայրացաւ կենւարը: Նա իր պա-  
հակախմբին հրամայեց ցրել նրանց վրանները:  
Զինուորները իսկոյն առաջ նետուեցին, շաղ  
տուին նրանց կրակները, քշեցին, ցրեցին նը-  
րանց էշերն ու աւերեցին սևացած վրանները:  
Քիչ յետոյ նրանք հասան քահանայի տուն: Երե-  
խաներին պատուիրեց, որ այգում սպասեն, իսկ  
ինքը վեր վազեց սանդուղներով ու տեսաւ  
կետին սենեակի մի մութ անկիւնում նստած:  
Նա լաց էր լինում:

— Նիկ, բացականչեց Կետը, տեղից վեր  
թուչելով և յուզմունքից խեղդուելով. դուք վե-  
րադարձաք, դուք կենդանի՞ էք:

Տարւինը բռնեց Կետի ձեռքը:

— Ես այնպէս վախենում էի ձեզ համար, Տարւին. ոչ մի լուր չը կար ձեղանից և ես հա-  
ւատացած էի, որ Սիթաբգայան անշուշտ սպա-  
նել է տուել ձեզ: Սոսկալի բաներ էի երեակա-  
յում ձեր մասին:

— Խեղճ Կետ, ձեր հիւանդանոցն էլ քայ-  
քայուեց: Ծանր վայրկեաններ ապրեցիք դուք: Մենք հիմա որքան կարելի է շուտ պէտք է հե-  
ռանանք այստեղից: Մի քանի ըռպէտվ միայն  
ազատուեցի Սիթաբգայի ճանկերից: Իմ ձեռքին  
նրանից գրաւ կայ. բայց մենք նրան մշտական  
պահել չենք կարող և պէտք է շուտով հեռանանք:

— Այո, Նիկ, ես ուզում եմ, որ դուք հե-  
ռանաք այստեղից:

— Իսկ դժուք:

— Իմ մասին չարժէ մտածել. Ես անյաջո-  
ղութիւն կրեցի: Ինչոք ուզում էի անել՝ բոլորը  
խորտակուեց:

— Ոչինչ, թանկագինս, կանցնի մի որոշ  
ժամանակ ու դուք կը մոռանաք այն ամենը,  
ինչոք եղաւ Ռատորում:

— Մեծ սխալմունք էր այս:

— Ի՞նչը:

— Իմ այստեղ գալը, իմ դործունէութեան  
ծրագիրը: Երեաց, որ սա կնոջ դործ չէ. այս-

տեղ, այս երկրում գործել ես չեմ կարող: Ես  
առայժմ հրաժարում եմ ամեն ինչից, Նիկ. Ինձ  
տուն հասցընք:

Տարւինը չափազանց ուրախացաւ այս խօս-  
քերից ու յայտնեց, որ նրանք պէտք է անմի-  
ջապէս ամուսնանան և դուրս գան այդտեղից  
որքան կարելի է շուտ: Կետը վախենալով գա-  
լիք վանդներից՝ համաձայնեց:

— Բայց միթէ կարծում էք, թէ մենք կա-  
րող ենք կենւարին թողնել այստեղ Սիթաբգայի  
ձեռքին, առանց որևէ պաշտպանութեան, ասաց  
Կետը:

— Ի հարկէ, ոչ. Ես մտածել եմ դրա մա-  
սին: Ես ուզում եմ համոզել ուաջային, որ նա  
կենւարին ուզարկի Սյմար քաղաքը ուսանելու,  
որաեղ սովորում են բոլոր ուաջաների որդիները:  
Նա այստեղ ապահով կը լինի: Իսկ առայժմ ես  
գնդապետ նոյանին պէտք է պարզեմ մի քանի  
հանդամանքներ և խնդրեմ, որ նա իր մօտ պա-  
հի երեխային մինչև նրա այստեղից գնալը:

— Ուրեմն նա ապահով կը լինի: Փառք Աս-  
տուծոյ: Բայց այն ով է գալիս ձին քշած, Նիկ:

Տարւինը դուրս նայեց պատուհանից և  
տեսաւ, որ մի ձիաւոր սլացաւ պահակախմբի  
միջով, գոռալով «Նամակ պարոն Տարւինին» ու  
կանգ առաւ տան առաջ: Տարւինը պատշգամբ  
դուրս եկաւ, ձիաւորից առաւ թուղթն ու կար-  
դաց. «Պարոն Տարւին, պահանջեցէք ինձանից,  
ինչ որ կամենաք՝ ես կը տամ ամեն ինչ: Խոս-

տանում եմ հանգիստ թողնել ռաջայ կենւարին,  
միայն թէ որդուս ինձ վերադարձը»:

Տարւինը որոշեց երեխային յետ տալ, հաւատացած լինելով, որ հազիւ թէ Սիթաբգայան այդպիսի յուսահատ դրութեան մէջ կարողանայ նորից դաւեր նիւթել իրա դէմ: Եւ մինչև նրա որևէ մահափորձ ծրագրելը՝ ինքը, կետն ու կենւարը արդէն հեռու կը լինեն նրանից: Նա երեխաներին պատուիրեց պալատ վերադառնալ, որից, սակայն, նրանք դժգոհեցին, որովհետեւ ուզում էին այստեղ մնալ ու տեմնել, թէ ինչպէս է կրակում Տարւինը: Ումր-Սինզը վճռականօրէն մերժեց ու համաձայնեց միայն այն ժամանակ, երբ Տարւինն ասաց, որ նրան կը նստեցնի իր ձիու վրայ ու ամբողջ ճանապարհին կը քշի ձին:

Երբ որ նրանք մօտեցան Սիթաբգայի ապարանքին, դուռը բացուեց ու դուրս եկաւ ծառան: Տարւինը ծառային յանձնեց Ումր-Սինզին: Փեղկերի ետևում շշուկ լսուեց, որը քանի դնում ուժեղանում էր. յետոյ փոխուեց մեղմ հեծկըլտանքի ու ապա ուրախ ծիծաղի:

Տարւինը յայտնեց, որ ցանկանում է ուշացին տեսնել:

Հինգ ըռպէէց յետոյ յայտնուեց ռաջան:

— Ախ, պարոն Տարւին, սիրալիր խօսեց ռաջան, քանի ժամանակ է ձեզ չեմ տեսել:

Տարւինը բարևեց նրան և խօսեց կենւարին արքայազունների դպրոցն ուղարկելու մասին:

— Հինգ տարուց յետոյ նա արդէն չափահաս կը լինի: Նա պէտք է երկրի կառավարիչ լինի, ասաց Տարւինը, հետևաբար նրան կրթութիւն պէտք է տալ, նախապատրաստել դրա համար:

— Ի հարկէ, նա շատ բան պէտք է սովորի, պատամխանեց ռաջան:

— Բայց հազիւ թէ կարելի լինի սովորել այդ բաները՝ ապրելով պալատի պատերի ներսը, կանանցոցում: Ուղարկեցէր նրան Այմար՝ արքայական գպրոցը, ուր բոլոր թագաւորների որդիները սովորում են:

— Բայց եթէ այնտեղ յանկարծ մի որևէ բան պատահի նրան:

— Ի՞նչ կարող է պատահել այնտեղ, որտեղ նրա վրայ հսկելու են անգլիացիները: Նա կունենայ իր սեպհական սենեակները, սեպհական ծառաներն, իր ձիապահները, ինչպէս և միւս արքայազունները: Նա նոյն պատիւը կունենայ այնտեղ, ինչոր այստեղ:

— Բայց արգեօք ինքը կուզենայ այնտեղ գնալ:

— Կարծում եմ, որ այս, հարցըէք իրան:

— Եկ այստեղ, որդեակս, կանչեց թագաւորը կենւարին. այ, պարոն Տարւինն ասում է, որ դու պիտի մտնես արքայական գպրոցը Այմարում, ուր քեզ կը սովորեցնեն նրացանաձգութիւն, ձի հեծնել ու երկիր կառավարել: Կուզես այնտեղ սովորել:

— Այս, հայր, ես արդէն մտածել եմ այդ  
մասին: Կանանց սենեակներում վազվելն ու  
մօրս խօսակցութիւնը և պարողուհիների երգերը  
լսելն ինձ ձանձրացրել են: Ուզարկիր ինձ Այ-  
մար, այստեղ ես կը սովորեմ հրամաններ տալ  
իմ պահակախմբին, ինչպէս որ թագաւորներն  
են հրամաններ տալիս:

— Լաւ, ես քեզ կուզարկեմ այստեղ, ասաց  
ուաջան:

Հիմա Տարւինը կարող էր հանգիստ լինել:  
Երեխան չի մնալ պալատում, հետեալէս ապա-  
հով կը լինի: Այժմ նա և կետը կարող են գնալ:

Մէկ էլ յանկարծ նա մտաքերեց պատուար-  
ների գործը, որի վրայ հարիւրաւոր մարդիկ  
ահազին աշխատանք էին թափել. ուաջան էլ  
այդ բոլորի համար մեծ ծախքեր էր արել: Զէ  
որ ինքը գրա փոխարէն խոստացել էր գետի  
հունից ոսկի հանել, իսկ հիմա ոչինչ չարած  
թողնի ու գնայ: Նա զգում էր, որ ինքը պէտք  
է վճարի ուաջային նրա արած բոլոր ծախսերը,  
թէկուզ իր բոլոր ունեցածն էլ գրա համար գնայ:  
Բայց նա ի՞նչպէս կիսատ թողնէր պատուարները  
և հեռանար:

Արդեօք մնալ վերջացնէլ, մտածում էր նա:  
Բայց չէ որ նա կետի կեանքը վտանգի կենթար-  
կէր. նա պէտք է կետին այստեղից հեռացնի  
հնար եղածին չափ շուտ: Օ՛, ի՞նչպէս նա  
զղում էր իր արածի համար. բայց արդէն ուշ էր:  
Վերջապէս նա գիմեց ուաջային.

— Ես եկայ ձեզ ասելու, որ գնում եմ այս-  
տեղից: Այսօր ես պէտք է պսակուեմ ու հեռա-  
նամ: Կը գա՞ք իմ հարսանիքին:

— Դուք գնում էք: Ուրեմն դուք ուզում էք  
պսակուել լեդի բժշկուհու հետ ու գնալ: Այն,  
ես կը գամ ձեր հարսանիքին: Բայց ի՞նչպէս է  
պատուարների գործը:

— Այ, հենց զրանց մասին էլ ուզում եմ  
խօսել ձեզ հետ: Ասացէք, որքան եմ պարտ ձեզ:

— Ի՞նչի՞ համար:

— Այն բոլորի համար, որ ես օգտուեցի ձեր  
բանուորներից ու ձեր վառողից:

— Նրանք բոլորն էլ բանախց գուրս թող-  
նուած յանցաւորներ են եղել, նրանց վարձ չեմ  
տուել: Վառողն էլ զինանոցիցն է վերցրուած,  
որը ինձ բոլորովին պէտք չէ, որովհետև ես ոչ  
ոքի հետ կոփւ չեմ անում. ուրեմն էլ ի՞նչ խօսք  
կարող է լինել պարտքերի մասին:

— Բայց և այնպէս ես պէտք է վճարեմ:  
Ես չեմ կարող հանգիստ լինել, զիտակցելով, որ  
ձեր փողերը ի զուր ծախսել եմ:

— Ի՞նչպէս թէ իզուր: Բայց միթէ ես քիչ  
բաւականութիւն եմ ստացել, զուրացանալով  
այն տեսարաններով: Ասացէք միայն՝ ձեզ մօտ  
արդեօք վառոդ չի՞ մնացել:

— Մօտ 500 պուդ մնում է այստեղ:

— Երբ դուք գնում էք, ուրեմն և առանց  
ձեզ էլ ոչ ոք այդ գործը չի շարունակելու,  
որովհետև բաւական գժուար է. արդեօք չի՞ կա-

բելի այդ վառողով մի վառաւոր պայթիւն սարքել, որից ժայռերը որոտան և գետինը դողայ:  
— Կարելի է, բայց ի՞նչ պայթեցնենք:  
— Թէկուզ հենց այն պատուարը:  
— Ինչպէս: Չէ որ այն համարեա վերջաշած պրծած է:

— Ես այդ պայթիւնը դիտելը աւելի եմ գերադասում: Միթէ չեմ կարող ես ստանալ այդ բաւականութիւնը:

Ի՞նչ արած, որքան էլ այդ ամօթ լինէր Տարփինի համար, այնուամենայնիւ պէտք է կատարէր ուաջայի արքայական քմահաճոյքը:

XV

Տարփինի ու կետի պսակը շատ շտապ կատարեց, որովհետեւ նրանք անպատճառ ուզում էին հենց նոյն գիշերը դուրս գալ: Ուաջան ու կենւարը ներկայ էին պսակին: Ուաջան պահանջեց, որ պայթիւնը անեն հարսանիքից յետոյ. Նա ուզում էր այդ ձևով տօնել հարսանեաց հանդէսը:

Երբ Տարփինը եկաւ պատուարի մօտ ու ասց բանուորներին, որ պէտք է պայթեցնեն այն, նրանք հիացան. Ճիշով ու աղաղակով քանդեցին վառողարանը և վառողի տակառները թաղեցին պատուարի տակ, վրան ամեն տեսակ ծանրութիւններ թափեցին ու ծածկեցին թարմ աւաղով:

Երբ ուաջան երեաց իր շքախմբով՝ Տարփինը վառեց երկար պատրոյգը: Կրակը վառւում էր դանդաղ: Յանկարծ լսուեց մի խուլ ճայթիւն: Պատուարը յետ բացուեց ու նրա խորքից բարձրացաւ մի սպիտակ բոցէ սիւն և ծխէ ամոլ հողի սկ փոշու հետ խառը: Գետի ջուրը կատազօրէն վազեց դէպի բացուածքը ու յետոյ ծուլօրէն ընկաւ իր առաջուայ հունը: Մի քանի բուպէից յետոյ նախկին աշխատանքները յիշեցնող ոչինչ չը կար այլն:

— Ես շատ գեղեցիկ էր, ասաց ուաջան: Ես սրա նման բան տեսած չեմ: Ափսոս, որ նորից նոյնն անել անհնար է: Բայց դուք ինչու էք գնում, պարսն Տարփին. ուաջայ կենւարը շատ կ'ափսոսայ ձեզ համար: Ինձ համար էլ տխուր կը լինի առանց ձեզ. Էլ ով ինձ հետ պողիչ կը խաղայ:

Տարփինը մէկ ուզում էր ասել, որ ինքը աւելի կարևոր գործեր ունի, քան թէ ծոյլ ուաջային ընկերակցելը, բայց բարւոք համարեց լոել:

— Ի՞նչ արած, գործերս ինձ հայրենիք են կանչում, ասաց նա միայն: Յետոյ նա հրաժեշտ տուեց ուաջային ու կենւարին, որը հազիւ զըսպեց իր լացը, և ուղերուեց քահանայի տուն, ուր կետը սպասում էր նրան:

Եղնասսայլը ճռնչում էր ու վերջալուսի շո-  
ղերի տակ շարժում դէպի երկաթուղու կայա-  
րանը: Նրանց ետևից բարձրանում էր Ռատորի  
կարմիր քերծը անտապատի դեղին աւազի մէջ.  
Կոռունիներն ու սագերը երամ-երամ իջնում էին  
եղեգնուտ գիշերելու, իսկ զիշերավարը արդէն  
ատամնաւոր քերծից բարձր էր:

Կետն զգալով գիշերուայ զով եղանակը՝ ա-  
մուր փաթաթուեց իր ծածկոցում: Տարւինը  
նստել էր սայլի ետեր և աչքը չէր բարձրացնում  
Ռատորից: Բազմերանդ ճրագները, որ լուսաւո-  
րում էին պալատի կախովի այգիները, հետզիտէ  
չքանում էին ճամբի պտոյտների ետեռում: Միայն  
մի պատուհան մնաց լուսաւորուած ծայրի աշ-  
տարակում: Նա էլ վերջիվերջոյ հանգաւ: Երկնա-  
կամարի վրայ անհամար ճրագներ վառուեցին:

Ճանկարծ նա այնպէս պարզ զգաց իր անց-  
կացրած և նոր գալիք կեսնքի տարբերութիւնը,  
որ ցնցուեց:

Այս բոլորը վատ երազ էր, շատ վատ  
երազ, բայց հիմա, վերջապէս, արթնացումն է  
գտիւ, խօսեց նա ինքն իրեն:

Այս, նա արթնացաւ նոր կեանքի համար:  
Զառամեալ Արեելքն իր ծոյլ դանդաղկոտու-  
թեամբ ու մտաւոր քարացումով, իր խորհրդա-  
ւոր ապարանքներով, ուր յանցանքն ու ոճա-  
գործութիւնն է ապրում մնաց նրա ետեռում:

Նրա կողքին էր Կեար, իսկ զրպանումը՝  
նառութեական:

Նրա առաջնկարւում էր կեանքի հեռանկարը՝  
լի եռուն գործունէութեամբ ու .յոյսերով, ուր  
նա կարող է միշտ առաջ գնալ ու հասնել նպա-  
տակին:

Նրան պատկերացաւ իր հայրենի քաղաքը՝  
շատ բարձրացած ու ծաղկած, շնորհիւ իր ոյժի,  
կամքի ու քաջութեան: Եւ խորին ինքնաբաւա-  
կանութեան զգացմունքը պատեց նրան: Երազը  
տեղի տուեց պայծառ ու սիրուն իրականու-  
թեան:

Կեցցէ գիտութիւնն ու քաղաքակրթու-  
թիւնը...

Ի՞նչ ասել տիկին Մետրի ու նշանաւոր  
նառութեակայի մասին...

Տիկին Մետրը չափազանց զգացուած էր  
այդպիսի հերոսութեամբ: Ի՞նչ ասել կուզի, որ  
երկաթուղու գիծը անցկացուեց Տոպազով. բայց  
չը նայած տիկնոջ թեթեամիտ ընաւորութեանը՝  
ընական ազնւութիւնը յաղթող հանդիսացաւ նրա  
մէջ. իմանալով, որ նառութեական սրբութիւն է  
իւրաքանչիւր հնդիկի համար, վճռեց վերադար-  
նել այն:

Թէև շատ դժուար էր դէպի Հնդկաստան  
երկրորդ ճանապարհորդութեան ձեռնարկելը,  
բայց և այնպէս մեր բազգաւոր զոյզը ուրա-  
խութեամբ յանձն առաւ վերադարձնել մանեա-  
կը ուր հարկի է:

Նոյնիսկ գնչուհի - թափուհի Սիմաբգայան  
անդամ մնաց շուարած ու զարմացած ամերի-  
կացիների ազնուութեան վրայ։ Նա խնդրեց նը-  
րանց, որ մնան իր մօտ և ստանձնեն իր որդու  
դաստիարակութիւնը, խոստանալով դրա վոխա-  
րէն ամեն տեսակ արտօնութիւններ. օրինակ՝  
նոր յարմար հիւանդանոց ու այլ բարեգործա-  
կան հիմնարկութիւններ։

Իսկ ամերիկացիները մնալ անկարող էին,  
որովհետև նրանց կանչում էր հայրենիքը...



ՀԱՅԻ ՊԱՐԿ



gray  
1000

«Ազգային գրադարան»



NL0064149

Այս և ապագայում հըատաբակուե-  
լիք գըքերի այս սերիան յատկաց-  
ւում է «Նուէր Մանուկներին» ըն-  
կերութեան օդտին։